

5918

mm Gg ju G

2058 pti 4 Sum G

2p qm Gc h Stip

h Gg h p G h p c

3KDI(4'8.925)

h-26

Ա. ԽԱՆԶՅԱՆ

25 AUG 2005
1 DEC 2009
421

**ՄԵՐ ԲԵԿՄԱՆ ՇՐՋԱՆԸ
Յ Ե Վ,
ՄԵՐ ԽՆԴԻՐՆ ԵՐԸ**

(Հ. Կ. (բ) Կ. Կենսկովի հաշվետվությունը
7-րդ համագումարին)

3XVII(47.925)

ԽՍ 26

Ն. ՇՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒ
ՅԵՐԵՎԱՆ 1930

3KPI(47.925)

25 AUG 2005

Խ-26

Ա. ԽԱՆՁՅԱՆ


ՄԵԾ ԲԵԿՄԱՆ ՇՐՋԱՆԸ
Յ Ե Վ
ՄԵՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1980

0.05.2013

5918



~~48859 KM~~



Հրատ. № 1994

24279.59

Գրառեպ. № 5279 (բ) Պատ. № 688 Տիրաժ 2500

Պետհրատի լեզվորդ տպարան Յերևանում.

1. ՄԵԾ ԲԵԿՄԱՆ ՇՐՋԱՆԸ

Ընկերներ. Հայկոմկուսի 6-րդ համագումարից հետո անցել է մեկ և կես տարի: Ներկա հաշվետվությունը պիտի ընդգրկի Հայաստանի Կոմմունիստական Կուսակցության, նրա հենտրոնական Կոմիտեի աշխատանքներն այդ շրջանում, 6-րդ համագումարից մինչև 7-րդ համագումարը: Սակայն մեր աշխատանքների հանրագումարները կատարելիս չի կարելի յեկնել միայն տեղական պայմաններին, սահմանափակվել զուտ տեղական շրջանակով: Մեր Կուսակցությունը Համաժողովենական Կոմ. Կուսակցության բաղկացուցիչ մի մասն է: Մեր յերկիրը—Սորհրդային Հայաստանը—աճում է և զարգանում վորպես Սորհրդային Միության անբաժան ու անխախտելի մասնիկը: Մեր յերկրի սոցիալիստական վերելքն ընթանում է Ս. Միության սոցիալիստական վեռակառուցման միասնական պլանի գծած ուղիներով: Այդ իսկ պատճառով, նախքան Հայաստանի Կոմմունիստական Կուսակցության աշխատանքների հանրագումարներին անցնելը, մեր հանրագումարը հետադարձ ակնարկով պիտի ընդգրկի այն ուղին, վորով ընթացավ սոցիալիզմի շինարարությունը Սորհրդային Միության մեջ վերջին տարիներում: Առանց այս անհրաժեշտ կապակցության անհնար է ճշգրիտ գնահատականը տալ մեր աշխատանքներին, անկարելի չե պարզորոշ ներ-

կալացնել առաջիկա աշխատանքների հեռանկարները։
 խորհրդային Միութիւնը, հաշվետու շրջանում,
 Համամիութենական 15-րդ համագումարից հետո ան-
 ցած յերկու և կես տարվա ընթացքում վերջնակա-
 նապես թեւակոխեց իր զարգացման նոր շրջանը, ժո-
 դովրդական տնտեսութեան, հասարակական վոլջ կա-
 ուցւածքի սոցիալիստական վերակառուցման շըր-
 ջանը։ Դեռ կուսակցութեան 14-րդ համագումարը, վե-
 րակառուցման շրջանի նախապատրաստական ֆա-
 զում, հրապարակ նետեց խորհրդային Միութեան **ԽՍՀՄ-ի**
գոլուստիացման լուրջ գործը, վորպես առաջին և հիմնական
 պայմանը յերկրի սոցիալիստական վերակառուցման։
 15-րդ համագումարը, յեկեկտ ունենալով պրոլե-
 տարիատի դիկտատուրայի տնտեսական և քաղաքա-
 կան դերքերի աննախընթաց ամրացման փաստը, առա-
 ջադրեց յերկրի ինդուստրիացման տեմպերի արագա-
 ցումը, սոցիալիստական հարձակողականի ծավալումն
 ալելի լայն ֆրոնտով։ Նա կուսակցութեան առաջ իր
 ամբողջ հասակով դրեց **գյուղի սոցիալիստական**
վերակառուցման խնդիրը, վորպես որակարգի գործ-
 նական հարց, վորպես գյուղական աշխատանքների
 կենտրոնական ողակ։ Կուսակցութեան 15-րդ համա-
 գումարը, այսպիսով, ընդգծեց խորհրդային Միութեան
 սոցիալիստական վերակառուցման յերկրորդ հիմնա-
 կան պայմանի ստեղծման — գյուղացիական մանր
 տնտեսութեան վերակազմակերպման, գյուղի կոլեկ-
 տիվացման ձեռնարկելու անհրաժեշտութիւնը։

Նոր, բարդ ու դժվարին խնդիրներ ծառացան
 սոցիալիզմի շինարարութեան առաջամարտիկ՝ բանվոր
 դասակարգի առաջ։ Այդ խնդիրների լուծման կարևո-

րագույն նախապայմանը, ինչպես ընդգծեց 15-րդ հա-
 մագումարը, բանվորական և աշխատավորական մաս-
 սաների ակտիվութեան բարձրացումն էր, պրոլետա-
 րական ինքնաքննադատութեան լայն ծավալումը, ա-
 նողոք պալքարը՝ ուղղված բյուրոկրատիզմի դեմ,
 խորհրդային որդանների ու կուսակցական կազմա-
 կերպութիւնների առանձին ողակների վերասերման,
 դասակարգային թշնամու ճնշմանը յենթարկվելու
 յերևույթների դեմ։

Յերկրի արագատեմպ ինդուստրիացում, գյուղի
 կոլեկտիվացում պրոլետարական ինքնաքննադատու-
 թեան լայն ծամալման, աշխատավոր մասսաների ակ-
 տիվութեան բարձրացման հիման վրա — ահա այն
 հիմնական ուղեցույցները, վոր նշեց կուսակցութեան
 15-րդ համագումարը մեր յերկրի սոցիալիստական
 վերակառուցման աշխատանքի ու պայքարի համար։

Յերկու և կես տարի յե, ինչ առաջ է ընթանում
 բալլէիկյան կուսակցութիւնը 15-րդ համագումարի
 լողունգների իրականացման գծով։ Յիվ նրա աշխա-
 տանքների արդյունքներն ախոր ակնբախ են։ Սոցի-
 ալիստական շինարարութեան հսկա զարկերակի բարա-
 խումն ալժամ պարզորոշ զգացվում է խորհրդային Միու-
 թեան բոլոր մասերում, նույնիսկ ամենահետամնաց
 շրջաններում ու գյուղերում։ Մենք հաստատեցինք
 հաշվետու շրջանում հնդամյա պլանը, վոր ներկայումս
 արդեն իրականութիւն է դառնում ամեն ոք և ամեն
 ժամ։ Չտեսնված չափերի յե հասնում աշխատավոր
 մասսաների ակտիվութիւնը, առաջ են գալիս սոցիա-
 լիստական շինարարութեան մեջ միլիոնների մաս-
 նակցութեան նոր ձևեր։ Չհակերպվում են բանվոր

դասակարգի և գյուղի հիմնական մասսաների զոգման ավելի բարձր և ամուր հիմունքները — կազմավորվում են նրանց արտադրական դաշինքը: Անասան են դառնում սոցիալիստական հասարակակարգի հիմունքները խորհրդային Միության մեջ:

Դեռևս կուսակցության 15-րդ համագումարի ժամանակ մասնանշվեց մեր գյուղի և գյուղատնտեսության հետաձգությունը, նրա անհամեմատ դանդաղ, անկայուն վերելքը արդյունաբերության աճման վիթխարի տեմպերի դիմաց: Այս հակասության լուծման ճանապարհը — գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման ճանապարհն է: Յեւ պրոլետարական հեղափոխության այս ամենարարդ ու ամենադժվար խնդրի լուծման բնագավառում ևս բայց չեն կայան կուսակցությունն արդեն ձեռք ե բերել անժխտելի նվաճումներ: Գլխավորելով չքավոր և միջակ գյուղացիության մասսայական ձգտումը դեպի կոլեկտիվ տնտեսությունները, մի ձգտում, վոր նախապատրաստվում էր լենինյան ճիշտ քաղաքականության հիման վրա վերջին տարիներում ծավալված մեր աշխատանքով, հենարան ունենալով յեղած խորհրդային և կոլեկտիվ տնտեսությունները և գյուղի հիմնական մասսաների չտեսնված ակտիվությունը, մենք անցանք գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման ավելի բարձր աստիճանին՝ համատարած կոլեկտիվացմանը: Համաճարած կոլեկտիվացումը **ԽՍՀՄ** Միության մի **ԵԱԲ** ԵՐՋԱՆԵՐՈՒՄ ԱՆԿԵՏԱԾՁԵՆԻ ԽՐԵՂԻՐ ԳԱՐՃԵՑԳ ԿՈՒԼԱԿՈՒՐՅԱՆ ԻԿՎԻԳԱՑԻԱՆ ՎՈՐԱԵՍ ԳԱՍԱԿԱՐԳ, վորով մեր կուսակցությունը կատարեց և կատարում է իր քաղաքականության ամենակարեոր

շրջադարձերից մեկը: Յեթի սրանից առաջ կուսակցություն քաղաքականությունը գյուղի կապիտալիստական տարրերի նկատմամբ նրանց սահմանափակումն ու վանումն էր, այժմ այդ ուղղությունամբ գլխավոր լողունը դառնում է համատարած կոլեկտիվացման բազայի վրա կուլակության՝ վորպես դասակարգի՝ լիկվիդացիան: Իսկ վոչ համատարած կոլեկտիվացման շրջաններում կուլակության սահմանափակման ու վանման լողունը իր ուժը պահպանելով և ավելի վճռականորեն կիրառելով հանդերձ, վերածվում է գլխավոր լողունի անցումը նախապատրաստող ոժանդակ մի լողունի:

Այս առավա դարնանացանը ընթացավ խորհրդային Միության մեջ ձեռնարկվող այս հիմնական շրջադարձի պայմաններում: Յեւ չնայած քաղաքական կոպիտ սխալներին, վոր կատարվեցին տեղերում, միջակի նկատմամբ կուսակցության գծի անթույլատրելի աղավաղումներին, վորոնք խոշոր չափով կրճատեցին մեր նվաճումները, այսօր կասկածից դուրս է այն մեծ բեկումը, վոր կատարվեց գյուղում, — **ԳՅՈՒԼԻ ԿԻՄՆԱԿԱՆ ՄԱՍՍԱՆԵՐԻ ԵՐՋԱԳԱՐՃԵ ԳԵՍԻ ՍՈՑԻԱԼԻԶՄ**: Միայն մեր դասակարգային թշնամիները, միայն ոպպորտունիստները կարող են բացասել կուսակցության նվաճումներն այս ուղղությամբ, սպեկուլյացիայի առարկա դարձնել սխալները և դժվարությունները՝ վարկաբեկելու համար կուսակցությանը: Փաստ է, վոր գյուղատնտեսության սոցիալիստական սեկտորի այն ծավալը, վորին չենթադրվում էր հասնել միայն 5-ամյակի վերջում, արդեն ձեռք ե բերված և ամրանում է հենց այս տարվա ընթացքում: Կոլ-

տնտնաշարժումը միլիոնների շարժումն է, նա խոր արմատներ է թողել խորհրդային գյուղում, և մասնակի ձախողումներն ու անհաջողությունները (գլխավորապես մեր սխալների հետևանքով) չեն կարող կասեցնել գյուղի հետագա արագատեմպ յերթը դեպի սոցիալիզմ: Հնգամյակի իրագործումն ավելի կարճ ժամանակաշրջանում, քան նախատեսվում էր, գյուղական տնտեսությունների մոտ 30 տոկոսի կոլեկտիվացումը խորհրդային Միության մեջ, — ահա ինչ ծանրակշիռ նվաճումներ ձեռք բերեց Համամիութենական կոմունիստական կուսակցությունը հաշվետու շրջանում, վոր իրավամբ կոչվում է մեծագույն բեկման օրջան, և վորով նա դիմավորում է իր առաջիկա 16-րդ համագումարը:

2. ՊԱՅՔԱՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԳԾԻ ՆԱՍԱՐ

15-րդից մինչև 16-րդ համագումարը ձգվող ժամանակամիջոցը դասակարգային պայքարի սրման աննախընթաց շրջանը դարձավ: Մեր սոցիալիստական լայնածավալ հարձակողականը չեր կարող առաջ չբերել դասակարգային թշնամու, գյուղի և քաղաքի կապիտալիստական ելեմենտների համառ ու կատաղի դիմադրությունը, վորն իր գագաթնակետին է հասնում մանավանդ այն ժամանակ, յերբ որակարգի խնդիր է դառնում գյուղում շահագործման պայմանների և, հետևաբար, կուլակության՝ վորպես դասակարգի՝ գոյություն պայմանների վերացումը: Յեվ իսկապես: Իր գոյություն պայմանների համար որհասական պայքար յողող դասակարգային թշնամին փորձում է

բոլոր զենքերը, ձեռք է առնում բոլոր միջոցները՝ դանդաղեցնելու և կասեցնելու համար սոցիալիստական շինարարության հաղթական ընթացքը: Հաշվետու շրջանում հացամթերման ասպարիզում կուլակը ակտիվ դիմադրություն անում է ձախողեցնել մեր տնտեսական քաղաքականությունը, սովի մատնել քաղաքներն, ու բանվորությունը: Նա հազար ու մի զարսուղի ճանապարհներով փորձում է իր ազդեցություն տակ առնել խորհրդային իշխանության առանձին ստորին ողակները, գյուղխորհուրդները, նա փորձում է կազմալուծել և ալյաքերել առանձին կոմունիստների և նույնիսկ առանձին կուսըջիջներ: Նա ակտիվ պայքար է մղում կոլտնտեսությունների դեմ, փնասարարության միջոցով խանգարում է կոլտնտեսությունների տնտեսական ամրացումը, տերրորի յեյենթարկում գյուղի սոցիալիստական շինարարության ակտիվ մարտիկներին, կաշառում է գյուղի չքավորական մասսաների առանձին անկալուն տարրերը: Յեվ վերջապես նա ոգտագործում է մեր կազմակերպությունների ամեն մի սխալը՝ ուժեղացնելու համար միջակ գյուղացիության տատանումները, իր ազդեցության շրջանակի մեջ առնելու համար նրա առանձին հետամնաց շերտերը:

Քաղաքում, արդյունաբերության ասպարիզում դասակարգային պայքարի սրումն իր ամենացայտուն արտահայտությունն է գտնում փնասարարության մեջ: 15-րդ համագումարից անմիջապես հետո Շախտիի հանրածանոթ գործով բացվում է փնասարարության լայնատարած շղթայի առաջին ողակը: Պրոլետարական մասսաների աճող զգոնությունը կարճ ժամանակա-

միջոցով հայտնաբերում ե ֆլասարարության բազմաթիվ ուրիշ դեպքեր: Պարզվում ե, վոր ֆլասարարները միջադպարին կապիտալի անմիջական թելադրությամբ և աջակցությամբ հյուսում եյին իրենց վոստայնները սոցիալիստական արդյունաբերության բոլոր կարևորագույն ճյուղերում՝ խանգարելու համար սոցիալիստական շինարարության արագատեմպ վերելքը: Կարիք չկա կանգ առնել դասակարգային փոխհարաբերությունների, դասակարգային պայքարի սրման բաղմամբ ռուրիշ արտահայտությունների վրա: Պետք ե շեշտել միայն, վոր անհրաժեշտ ե պրոլետարական մասսաների հսկայական մոբիլիզացիան, բանվոր դասակարգի ուժերի լարումը, դասակարգային զգոնության ու աշխուժության բարձրացումը՝ վոյ միայն հայտաբերելու համար դասակարգային թեմամու դավադիր վնասարարությունը, ալեմ բնումը խեղդելու յեմ հաղթահարելու նրա կողմից բարձրացող ամեն մի խոչընդոտ սոցիալիստական շինարարության հաղթ արեամի գեմ: Մեր կուսակցությունը գրնում ե 16-րդ համագումար՝ ունենալով իր բազածում չափազանց խոշոր դրական արդյունքներ, դասակարգային թշնամու դիմադրական փորձերի ջախջախման բնագավառում: Յերբեք չմատնվելով խուճապի, միշտ նախընտրելով դժվարությունների հաղթահարման լենինյան ուղին, մեր կուսակցությունը իր լենինյան շտաբի, կե-ի դեկավարությամբ առաջադրեց ախպիսի կարևոր ու աշտմեական մի ծերագիր, վորպիսին եր հացի պրոբլեմի լուծումը ամենակարգ ժամանակում, կուլակության հացի ապրանքային լեւուլթի փոփախեցումը սոցիալիստական

հասվածի հացի արագացումով: Նա ձեռնարկեց իրագործելու պրոլետարական կադրերի, բանվոր դասակարգին հարադատ մասնագիտական ուժերի ստեղծման հոյակապ ծրագիրը: Այսպիսով, ակտիվացող դասակարգային թշնամու դեմ ուղղված մեր պայքարը ել ավելի կոփեց պրոլետարիատի և նրա կուսակցության մարտունակությունը և հայտաբերեց նրա վճռական կամքը՝ չընկճվել դժվարություններից, տեղի չտալ թշնամու դիմադրության առաջ, հաղթահարել ու անցնել դժվարությունների վրայից դեպի սոցիալիզմի հաղթանակը:

Սակայն բանվոր դասակարգը չինական պատենշնիրով չի բաժանված, չի մեկուսացած մյուս դասակարգերից: Նրա շարքերն ամեն ուր լայնանում են մանր-բուրժուական, գյուղացիական տարրերով, վորոնք գալիս են քաղաք, ընդգրկվում արդյունաբերության մեջ, բերելով իրենց նախկին կացության հետ կապված տրամադրություններ, նախապաշարումներ և հուշեր: Բանվորների զգալի շերտերը կապված են մնում գյուղի հետ: Դասակարգային թշնամու ակտիվությունը, դժգոհությունն ու ճնշումը բոլորովին անհետևանք չեն անցնում նաև բանվոր դասակարգի վորոշ, պակաս կաշուն շերտերի համար: Նրանք դժվարությունների պայմաններում այս կամ այն չափով տուրք են տալիս դասակարգային թշնամու տրամադրություններին և սնուցանում են յոյդ տրամադրությունների արտացոլումը նաև բանվոր դասակարգի ավանգարդի՝ Կոմունիստական Կուսակցության թույլ ողակներում: Այս հողի վրա չե, վոր առաջ են գալիս կուսակցության գլխավոր գծից թեքումները մեր շարքերում:

Հաշվետու շրջանում դասակարգային պայքարի սրույն իր յուրահատուկ անդրադարձումը գտավ նաև կուսակցության ներսում: Դասեվորդեց յեվ ձեկակերպվեց աջ քեֆումը կուսակցության շարժումը, վորպես կուլակուլյան հանգես բերած ճեման հեթեվանք: Արտահայտելով կուլակուլյան ձգտումներն ու դժգոհությունները՝ աջերը փաստորեն կանգնում են յերկրի ինդուստրիացման տեմպերի դանդաղեցման հողի վրա: Չէ՞ վոր ինդուստրիացման քաղաքականության դեմ ուղղված է կուլակի դժգոհությունը՝ առաջին հերթին: Նրանք, աջ թեքման կողմնակիցները, հանգում են ըստ եյուլյան գյուղի զարգացման «ինքնահոսի» մանր-բուրժուական թեորիային, բացառելով պրոլետարիատի ղեկավար ու հեղաշրջիչ դերի նշանակությունը: Նրանք չեն ընդունում կոլտնտիշնարարությունը՝ վորպես գյուղի սոցիալիստական վերակառուցման հիմնական ճանապարհը: Ակտիվ պայքարի փոխարեն նրանք գերադասում են հարմարվելու և կուլակին գիշումներ անելու ուղին: Աջ թեքման ճանապարհն ուղիղ գծով դեպի պրոլետարական դիկտատուրայի բուրժուական վերասերումն է առաջնորդում: Նա վերակառուցման շրջանի հիմնական վտանգն է մեր կուսակցության համար: Առանց դիմակազերծ անելու աջ քեֆումը կուլակային, հակապրոլետարական եյուլյունը, առանց լայն մասսաները մոբիլիզացիայի յեթարկելու յեվ պայքարի հանելու նրա դեմ, անհնար է առաջ շարժվել, ապահովել սոցիալիզմի կառուցման վերահաս հաղթանակները: Այդ է պատճառը, վոր հազվեսու քաջանում կուսակցությունը կենտրոնացրեց կրակն աջ ոպպոզիյունի դեմ:

մի գեմ, վորպես ավալ քաջանի հիմնական վեանգի:

Անշուշտ միայն աջ թեքման դեմ ուղղված կրակով չի կարող սահմանափակվել պայքարը կուսակցության գլխավոր գծի անադարտ կիրառման համար:

Ճիշտ է, տրոցկիզմի հետ կուսակցությունը հիմնական հաշվհարդար կատարեց դեռևս 15-րդ համագումարում: Տրոցկիզմի հետագա եվոլյուցիան վերջնականապես մերկացրեց «ձախ» ֆրակցիոնի տակ ծածկված նրա հակահեղափոխական իսկապետ դեմքը, վորի վրա այսօր արդեն փայլում է բուրժուական մամուլին վաճառվածի անշնչելի դրոշմը: Սակայն տրոցկիստական, կիսատրոցկիստական, «ձախ» տրամադրությունները, սնվելով բոլոր տեսակի ոպպոզիտիվիզմի հիմնականում ընդհանուր աղբյուրից՝ մանր-բուրժուական տարերքից, նույնպես ունեցան այս կամ այն արտահայտությունը, այս կամ այն կրկնությունը՝ իրենց հերթին նույնպես սպառնալով կուսակցության գլխավոր գծի անշեղ կիրառմանը: Գործնական աշխատանքներում այդ տրամադրությունները հաճախում են միջակի թերագնահատման, միջակի վերաբերմամբ լենինյան փորձված գծի խախտմանը, յերբ «չքավորների վրա հենվելով և կուլակուլյան դեմ անողորմ պայքարելով» միջակի հետ դաշինքն ամրացնելու քաղաքականությունն սկսում են փոխել լենինիզմին ամբողջապես թշնամական քաղաքականությունը, միջակի հանդեպ կիրառել հրամանատարություն» (ԿԿ-ի ապրիլի 2-ի դեմոսից): Միջակին պրոլետարիատի հետ գժտեցնելու իրենց դիրքավորումով «ձախերն» ըստ եյուլյան ջուր ելին ավելացնում կուլակի, ինչպես և նրա աջ ոպպոզիտիստական ա-

գենտուրայի ջրաղացին: Ահա թե ինչու հաշտվողական վերաբերմունքը «ձախ» թեքման նկատմամբ նույնքան փաստակարհ, վորքան և աջերի նկատմամբ: Ահա թե ինչու՝ կենտրոնացնելով կրակն աջ թեքման դեմ, լենինյան կուսակցությունն աչքաթող չի անում և «ձախ» թեքման անգամ ամենափոքր արտահայտությունը:

Հաշվետու շրջանի մեր աշխատանքների, մեր նվաճումների պատմությունը, ինչպես նաև կուսակցության վողջ պատմությունը՝ խոր կերպով ափսոսված է յերկու ֆրոնտի վրա կուսակցության անխնա պայքարով: Ահա այդ պայքարը, և առաջին հերթին աջ թեքման գաղափարախոսության և պրակտիկայի դեմ պայքարն էր, վոր ապահովեց մեր աշխատանքների հաջողությունը, ստեղծեց պայմաններ՝ հնգամյա պլանը չորս տարում իրագործելու, «հասնելու և գերազանցելու համար կապիտալիստական առաջավոր յերկրներին պատմական ամենակարճ ժամանակում»:

3. ՀԱՅԿՈՍԿՈՒՍԻ ԵՐԴ ՀԱՄԱԳՈՒՍԱՐԻ ԳԾԱԾ ԲԱՅԼՇԵՎԿԱՅԱՆ ՈՒՂԻՆԵՐՈՎ

Ահա, ընկերներ, այն ընդհանուր պայմանները, վորոնք բնորոշում են խորհրդային Միության և մեր կուսակցության զարգացման ընթացքը վերջին տարիներում: Նույն այդ պայմաններից և կուսակցական ընդհանուր լողունքներից բղխեցին և Հայկոմկուսի ու նրա կենտրոնական կոմիտեի աշխատանքները հաշվելու շրջանում, մեր 6-րդ համագումարից մինչև ներկա 7-րդ համագումարը: Հայտնի յե այն բացառիկ

տեղը, վոր գրավեց 6-րդ համագումարը Հայաստանի կոմկուսակցություն պատմության մեջ: Նա վերջնական ու ընդհանուր գնահատականը տվեց այն խոշորագույն սկզբունքային-քաղաքական սխալների, վոր թույլ եր տալիս իր գործունեության ընթացքում կուսակցության այսպես կոչված նախկին ղեկավարությունը: Նա շեշտեց, վոր այդ սխալները պատահական բնույթ չէին կրում, նրանք արդյունք էին աշխուժացող դասակարգային թշնամու, նացիոնալիստական տարրերի ճնշման, այն տարրերի, վորոնց համար նեղ է պրոլետարական դիկտատուրայի շրջանակը, վորոնք յերազում են նրա ազգային-դեմոկրատական վերասերման մասին: Նրանց արտահայտություն է այդ ղեկավարության աջ-ճացիոնալիստական քեֆման:

Մենք չենք կործանվի, վորովհետև չենք վախենում խոսել մեր թերությունների մասին, կսովորենք հաղթահարել մեր թույլ կողմերը, —ասում եր լենինը: Լենինյան այս թեզի լավագույն ապացույցներից մեկը կարող է հանդիսանալ ինքնաքննադատության ծավալումը մեր աշխատանքներում:

Անխնա հայտաբերելով բոլոր թերություններն ու սայթաքումները, մոբիլիզացիայի յենթարկելով կուսակցական մասսաները աջ նացիոնալիստական թեքման ամեն մի արտահայտության դեմ, Հայաստանի կոմունիստական կադմկերպությունները բայշխիկյան նոր կոփում ստացան, նրանք զգալի արագությունով առաջ շարժվեցին իսկական բայշխիկյան ճանապարհով: Բարձրացավ Հայաստանի կոմունիստական կուսակցության բաղաձայն մակարդակը, նրա տեսական և գործնական ալ կազմակերպությունների զարգացումը:

բում: Արագացավ կուսակցական աշխատանքների տեմպը գլուղում և քաղաքում, բարձրացավ այդ աշխատանքների վորակը: Այս պայմաններում կուսակցության 6-րդ համագումարը գծեց բայձեկիկյան վերակառուցողական աշխատանքների այն ծրագիրը, վորի իրականացման ամփոփումներով պետք է զբաղվի մեր ներկա համագումարը:

4. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԵԼՔԸ

Վերջին մեկ և կես տարվա ընթացքում, նախորդ շրջանի համահամառոտությամբ, ել ավելի արագ թափով առաջ գնաց մեր ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերելքը: Այդ մասին վկայում են ամենից առաջ հիմնական ներդրանքները: Կարևորագույն այս ցուցանիշները ցույց են տալիս ժողովրդական տնտեսության աճման և վերակառուցման այնպիսի ծավալ, վոր շատ շատերին ցնորք էր թվում միջանի տարի առաջ, և վորը հնարավոր է միայն խորհրդային եկոնոմիկայի առավելությունների ընձեռած հնարավորությունների պայմաններում, ինչպես նայել շուրջիկ այն հսկայական աջակցության, վոր ստացում է Խորհրդային Հայաստանը համաձայն Խորհրդային Միության սոցիալիստական վերակառուցման ընդհանուր ծրագրի:

Նախորդ հնգամյակի ընթացքում, 23-24 թվից մինչև 27-28 թվը, վորը ժողովրդական տնտեսության մեջ հիմնական ներդրանքները հասան 69 միլիոն ռուբլու: Ներկա հնգամյակի առաջին իսկ տարվա՝ 28-29

թվի ընթացքում հիմնական ներդրանքները կազմում էին 40 միլ. ռուբլի: 29-30 թվին Հայաստանի ժողովրդական տնտեսությունն արդեն ստանում է 80 միլիոն ռուբլուց ավելի հիմնական ներդրանքներ: Այսպիսով՝ ներկա հնգամյակի առաջին չորեք տարին ժողովրդական տնտեսության լայնացման գործում ավելի մոտավորապես նույնքան, ինչքան վորը նախորդ հնգամյակը: Առաջիկա 30-31 թվի համար նախատեսվում են արդեն 190 միլիոնից ավելի հիմնական ներդրանքներ, իսկ այս ամբողջ հնգամյակի ընթացքում՝ 304 միլիոն ռուբլու: Միայն այս միջանի թվերը, վորոնք ցնորք չեն, վորոնք կոնկրետ իրականություն են դառնում մեր աչքի առաջ ամեն ոք և ամեն ժամ, բավական են՝ ցույց տալու համար այն հսկայական ծավալը, վոր գնալով ստանում է մեր ժողովրդական տնտեսության վերելքը:

Հիմնական այս ներդրանքներն առաջին հերթին զարկ են տալիս մեր սոցիալիստական արդյունաբերության զարգացմանը: Յեթե 27-28 թվին ներդրանքների ընդհանուր գումարի միայն 35 տոկոսն էր գնում արդյունաբերության մեջ, 28-29 թվին՝ 41 տոկոսը, ապա ընթացիկ տարվա ընդ որ ներդրանքների մոտ 50 տոկոսը ծախսվում է արդյունաբերության և երկտորշինարարության գծով: Կուսակցության հիմնական լոզունգը՝ չերկրի ինդուստրիացման մասին՝ լայնորեն կիրառվում է նաև մեզանում: Մեր յերկրում, նախկին ցարական Ռուսաստանի այդ ամենախղճուկ զավառում, արդեն բարձրանում են նորակառույց գործարանների ու երկտրոկայանների հսկա կորպուսները: Յերկրի ինդուստրիացման, արդյունաբերության տեսակարար

2424-9



կշռի բարձրացման մասին վկայում են արդյունաբերության արտադրանքի թվերը՝ ժողովրդական տնտեսության ընդհանուր արտադրանքի համեմատությամբ: Յեթե ժողովրդական տնտեսության տարեկան ամբողջ արտադրանքն ընդունենք 100, ապա արդյունաբերության արտադրանքը կազմում է՝ 26-27 թվին—ընդհանուր արտադրանքի 25 տոկոսը, 27-28 թվին՝ 30 տոկոսը, 28-29 թվին 34 տոկոսը, իսկ ընթացիկ 29-30 թվին կազմելու չե արդեն 40 տոկոսը: Այսպիսի արագության զարգանալով, հնգամյակի վերջում արդյունաբերության տեսակարար կշիռը մեր յերկրի ժողովրդական տնտեսության մեջ կհասնի մինչև 53 տոկոսի: Ավերակների ու թշվառության դասական չիրկիրը վերածվում է առաջադիմ ազդարարային-ինդուստրիալ յերկրի:

Ինդուստրիացման արագ թափը, արդյունաբերության տեսակարար կշռի բարձրացումը, սակայն, չի նշանակում, Վոր բացարձակորեն չի աճում նաև գյուղատնտեսությունը: Այս գծով նույնպես նկատելի չե կապիտալ ներդրանքների աճում: Նախորդ հնգամյակում Հայաստանի գյուղատնտեսությունն ստացավ ընդամենը մոտ 17 միլ. ռ. հիմնական ներդրանքներ: 28-29 թվին, ներկա հնգամյակի առաջին տարին, ներդրանքները կազմում են 8 միլ. ռուբլի, այս տարի՝ 15 միլիոնից ավելի, յեկող տարի՝ 24 միլ. ռուբլի, իսկ այս հնգամյակի ընթացքում՝ 81 միլ. ռուբլի: Նշելով գյուղատնտեսության աճման անվիճելի փաստը, հենց թեկուզ յեկնելով հիմնական ներդրանքների ցուցանիշից, չենք կարող միաժամանակ չարձանագրել նրա աճման տեմպի դանդաղությունը և վորոշ անկայունու-

թյունը. այսպես, արդյունաբերության տարեկան վողջ արտադրանքը 27-28 թվից սկսած՝ աճում է հետևյալ արագությամբ. 27-28 թվի վր նախորդ տարվա համեմատությամբ տալիս է 36,3 տոկոս աճում, 28-29 թվի վր՝ իր նախորդ տարվա համեմատությամբ՝ 36,5 տոկոսի աճում, 29-30 թվի վր՝ իր նախորդի համեմատությամբ՝ 37,2 տոկոսի և, վերջապես, առաջիկա 30-31 թվին այս տարվա համեմատությամբ սպասվում է արտադրանքի աճում 47,5%⁰-ով: Նույն ժամանակաշրջանում տարեցտարի գյուղատնտեսության ընդհանուր արտադրանքն աճում է՝ 27-28 թ.—8 տոկոսով, 28-29 թ.—12 տոկոսով, 29-30 թ.—7 տոկոսով, 30-31 թ. սպասվում է աճում 9,5 տոկոսով: **Յեթե աճեալ է ներկայումս գյուղատնտեսության աճման տեմպը հասցրել նույնպիսի արագության, վորով զարգանում է արդյունաբերությունը, ապա սխալ է նայել քերագնահատել նրա համեմատական հետամնացության և գինեի փաստը, վոր յուրջ վաճագ կարող է սեղծել հենց արդյունաբերության հետագա արագացման զարգացման համար:** Այդ պատճառով ել պահանջելով յերկրի ինդուստրիացման բարձր տեմպերը՝ մենք որվա հրամայական խնդիր պիտի դարձնենք մի շարք ձեռնարկումների կիրառումը՝ նպասակ ունենալով ավելի արագացնել նաեւ գյուղատնտեսության տեմպերը:

• Այժմ յերկու խոսքով ընորոշենք այն ուղիները, վորով ընթանում է արդյունաբերության վերելքը խորհրդային Հայաստանում: Ամենից առաջ պիտի հիշվի մեր հաճախե հարսությունների մեղակումը, վորոնց մեջ առաջին տեղը զբաղում է պղինձը. հաղթահարե-

լով հսկայական դժվարութիւններ՝ մենք կարողացանք մինչև այժմ հիմնականում վերականգնել լիակատար քայքայման հասած պղնձի արդյունաբերութիւնը: Պղնձի արտադրանքն անցած չերեք տարիներում յեղել է՝ 26-27 թվին՝ 1.679 տոնն, 27-28 թվին՝ 2.093 տոնն և 28-29 թվին՝ 2,823 տոնն: Այս քանակը, վոր դեռ յետ է մնում նույնիսկ նախապատերազմյան չափերից, խիստ անբավարար է, յետք նկատի ունենանք մի կողմից պղնձի նշանակութիւնը Սորերդային Միութեան համար, մյուս կողմից՝ մեր հնարավորութիւններն այս ասպարիզում: Պղնձի արդյունաբերութեան բարձրացման համար մենք ձեռնարկել ենք նրա հիմնական վերակառուցմանը: Մոտակա մի քանի տարվա ընթացքում պղնձի արտադրանքը Հայաստանում պիտի հասնի տարեկան 15.000 տոննի: Այդ նպատակով 5-ամյակի ընթացքում տրամադրվում են 35 մլր. ուղարկում հիմնական ներդրանքներ: Յենթադրվում է և ձեռնարկված է առանձնապես զարկ տալ հետախուզական-նախապատրաստական աշխատանքներին, բնական հանքանյութի հարստացմանը, վորի նպատակով Ղափանում և Ալլահվերդում այս տարի սկսվում է ֆլոտացիոն գործարանի կառուցումը, իսկ 30—31 թվին՝ Ալլահվերդում պղնձաձուլական մեծ գործարանի կառուցումը, արդեն կառուցվում է Միջնեվան-Ղափան յերկաթագիծը, վոր հսկայական ազգակ կգառնա այդ օջառնի պղնձահանքերի վերելքի համար:

Յերկրի ինդուստրիացման բնագավառում չերկրորդ տեղը բռնում է ելեկտրական կայանների շինարարութիւնը: Ավարտվեցին և լիակատար բեռնվածութեամբ ու լարվածութեամբ աշխատում են Յերևանի ու Լենին-

նականի կայանները: Շարունակվում է մեր նոր շինարարութեան սարժանք Ձորագետի շինարարութիւնը՝ հետևյալ տարում ավարտվելու համար: Հիմքը դրինք Քանաքեռի ելեկտրակայանին, վորի կառուցումը նույնպես վերջանալու չէ հետևյալ տարում:

Նախապատրաստական աշխատանքներ են սկսել Սոլակում յեվա մի ելեկտրակայան հսկա կառուցելու համար: Շարքի չեն անցնում նաև մի շարք տեղական փոքր կայաններ՝ վերջանում է Իջևանի կայանը, կառուցվում են այս տարի Դիլիջանի, Գորիսի, Ղարաքիլիսայի, Մեղրու, Կոմմունայի և Կարմիր գյուղի տեղական կայանները: 31-32 թվին մեր կայանները կտան արդեն 53.400 կիլովատտ ելեկտրական ուժ:

Ելեկտրական հոսանքները հիման վրա արդեն զարգանում է մեր ֆիմիական արագորոշութիւնը: Այս տարի կառուցվում է ցիանամիդի գործարանը, սկսվում է Տանձուտի կալիքանի շինարարութիւնն ու սարքավորումը, ինչպես նաև ձմեռաթիվուտի և պղնձի արջասպի գործարանների շինարարութիւնը:

Ուժեղ զարկ է ստանում շինարարութեան արագորոշութիւնը: Ձեռնարկել ենք արդեն Դավալուի ցեմենտի գործարանի շինարարութեանը: Պեմդայի և տուֆի մշակման նախնական դժվարութիւնները հարթվում են, և պատրաստվում են նախապայմաններ՝ լայն չափով ռզոտագործելու համար այդ շինանյութերը շինարարութեան համար:

Լեռնակայանի օբեկտիւն ավելի ու ավելի յէ լայնանում: Շարունակվում են 60.000 նոր իլիկների և 2.520 գործվածքային դազգայանների հաստատման աշխատանքները:

Պիտի հիշել նաև Յերևանի մեխանիկական և կոնսերվի գործարանների կառուցման ավարտումը, կաշեգործարանի և բամբակի ու ձեթ-ոճառի գործարանի ընդարձակումն ու վերասարքավորումը և այլն:

Առանձին տեղ է բռնում յերկաթուղային շինարարությունը, մեր ժողովրդական տնտեսության այս «նեղ» ու դժվար լուծելի խնդիրը: Հաշվետու շրջանում վերջացրինք Պրեկի գիծը՝ 32 կմ., վոր արժեքը 3.600.000 ռուբլի, Պեմզայի գիծը՝ 6 կմ., վորի վրա ծախսվեց 600.000 ռուբլի. սկսել ենք Ղափանի գծի շինարարությունը՝ 40 կմ., վորի համար բաց է թողնելված 7 միլ. ռուբլի: Սակայն այս ասպարեղում դժբախտությունը շատ հեռու է բավարարելից: Ցերեվան-Սեվան յերկաթուղու հարցը, վորն ուղղակի հեղափոխից ցեանակություն ունի Հայաստանի մեծ մասի տնտեսության բարձրացման համար, դեռ մնում է ոգում կախված: Օւաշիկայում այս հարցը պիտի դարձնենք մեր շինարարության համար հանգուցային խնդիր՝ կարն ժամանակում այն արգեն գործնական աշխատանքի ռեյսերի վրա ղեկու համար:

Մեր ժողովրդական տնտեսության արագաձուլման աճման կարևորագույն ցուցանիշն է կազմում նաև մեր բյուջեն: Խորհրդային Հայաստանի տերրիտորիայի բյուջեն վերջին տարիներում աղիս է հետևյալ պատկերը.—25-26 թ.—22.674.000 ռ., 26-27 թ.—28.880.000 ռ. (աճ. 27,4 տոկոսով), 27-28 թ.—32.486.000 ռ. (աճ.՝ նախորդի համեմատությամբ՝ 12,5 տոկոսով), 28-29 թ.—51.225.000 ռ. (աճ.՝ նախորդի համեմատությամբ՝ 57,7 տոկոսով) և, վերջապես, այս տարի՝ 76.485.000 ռ. (աճ.՝ նախորդի համեմատությամբ՝ 49,3 տոկոսով):

Արագաճակությամբ 1 հոգու վրա 25-26 թվին ընկնում էր 26 ռ. 33 կ. ծախս, այս տարի՝ 76 ռ. 48 կ. ըստ ընդհանուր բյուջեի: Սակայն վոչ միայն աճումն է մեր բյուջեն բացարձակ թվերով, նա ամրանում է և առողջանում. տեղական բյուջեում ազմիխտրատիվ-դատական ծախսերը 25-26 թ. կազմում էին 21,9 տոկոս, ներկայումս նրանք իջել են 11,3 տոկոսի. կուլտուրայի ծախսերը նույն ժամանակում 33,9 տոկոսից բարձրացել են 36,1 տոկոսի. արտադրական-տնտեսական ծախսերը 44,2 տոկոսից բարձրացել են մինչև 52,6 տոկոսի: Այս թվերը՝ չոր ու ցամաք՝ պերճախոս ապացույց են պատմական այն բեկումների, վորոնք կատարվում են մեր տնտեսության և իրականության մեջ վերջին վերակառուցողական տարիներին ընթացքում:

Այսպիսով մեր յերկրի ինդուստրիացումն առաջ է գնում հսկա թափով, գերազանցելով հնգամյակը:

Դաշնակցական «Դրոշակ»ը պնդում է, վոր մենք չունենք «5-ամյա ծրագիր»: Պատճառն այն է, խորիմաստ կերպով ասում է դաշնակ «տնտեսագետը», վոր «Հայաստանի մասնագետների ծրագրերը չեն ընդունվել կենտրոնների (Թիֆլիս, Մոսկվա) կողմից, վորովհետև Հայաստանի տնտեսական վերելքին նպաստող ամեն լուրջ ծրագիր ու ձեռնարկ դիպչում է Ադրբեյջանի կամ վրաստանի տնտեսական շահերին»: Անցյալի հուշերով ուրիշ դաշնակները չեն ել կարող ուրիշ կերպ ներկայացնել անդրկովկասյան ժողովուրդների փոխհարակալացնել անդրկովկասյան ժողովուրդների փոխհարակալացնել տնտեսական շինարարության բնագավառում: Նրանց ցամաքած ուղեղների ուժից վեր է հասկանալ, վոր խորհրդային իշխանության պայման-

ներում վողջ շինարարությունը խորհրդային Միության միջև և խորհրդային Անդրկովկասում ընթանում է միասնական սոցիալիստական պլանով, վորը քննում և հաստատում են իրենք՝ աշխատավոր մասսաները, և վորի նպատակն է միջոցների ամենանպատակահարմար ոգտագործումով բարձրացնել խորհրդային Միության անխտիր բոլոր հանրապետություններին, բոլոր ժողովուրդների աշխատավորության բարեկեցությունը: Մարդիկ լկտիություն ունեն հայտարարելու, վոր «Կենտրոնները չեն հաստատում մեր պլանները»: Միեզեռ Օնգրկովկասի պլանները կենտրոնում բնգվիս ասգեպքերում լայնացում են, բան քե կրնաման են յեքարկվում: Դաշնակները համարձակություն ունեն գրելու, վոր իր «արտառոց քաղաքականությամբ խորհրդային իշխանությունը հետին չբավորության կհասցընի յերկիրն ու աշխատավոր զանգվածները»: Թալանի ու ավարի ասպետների ամեն մի վայրահաջին պատասխանելը մեր խնդիրը չէ: Կուլակի, շահագործողների շահն աշխատավորության շահից գերադասողները միայն կարող են նման մեղադրանք բարդել մեր վրա: Իսկ այդ տիպի մարդկանց կարծիքը մեր մասին ուրիշ կերպ էլ չի կարող լինել:

Առանց այլևայլի դեն շարտելով թշնամու վայրահաջը, մենք առաջ կտանենք մեր յերկրի ինդուստրիացումը, մեր արդյունաբերության զարգացումը: Օւնելով անհրաժեշտ գասեր մեր բացերից ու բույլ կողմերից, ուժեղացնելով աշխատավոր մասսաների ղեկավար մասնակցությունը մեր շինարարության մարզում, ավելի արագացնելով յեվ աքերի գարձնելով նոր կառուցումների նախագծումն ու նախա-

պահրասումը, մենք կկարողանանք առաջիկա շրջանում ավելի լայն և անվրեպ քայլերով առաջ ընթանալ յերկրի ժողովրդական տնտեսության անընդհատ վերելքի և սոցիալիստական վերակառուցման դժով: (Ծափահարություններ):

5. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒՅՅԱՆ ՊԼԱՆՆԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Հայկումկուսի 6-րդ համագումարը հրահանգեց մեզ «ճեշական ունիվերսալիզմի ղեկգեցեցեքը, կորգոդական հոգեբանության մնացորդներն արմատախիլ անելուց զաս՝ ե՛լ ավելի ուժեղացնել կուսմարմինների ղեկավարությունը յեվ ստորին կազմակերպությունների մասնակցությունը ճեշական շինարարության խնդիրների բնությունը»: Համագումարը պահանջ դրեց «մորիլիզացիայի յինթարկել կուսակցական, պրոֆեսսորնալ, տնտեսական, մարմինների և բանվորական մասսաների յեռանդն ու վողջ ստեղծագործական նախաձեռնությունը՝ ռացիոնալիզացիայի, աշխատանքի գիսցիպլինայի յեվ արագորդականության բարձրացման, ինքնարժեքի իջեցման յեվ արագությունը վորակի բարձրացման համար: 6-րդ համագումարի այս կարևորագույն դիրեկտիվների իրագործման ասպարիզում մենք աչքի ընկնող նվաճումներ ունենք: Հաշվետու շրջանում, անկասկած, մեծ չափով ուժեղացավ կուսակցության ղեկավարությունն արդյունաբերության նկատմամբ: Յիթե աչքի անցկացնենք Կենտկոմի վորոշումները 6-րդ համագումարից մինչև 7-րդ համագումարը, պիտի տեսնենք, վոր Կենտկոմի նախագա-

հուլիսին, քարտուղարութիւնը և աշխատող անպատան զգալի չափով մտահոգված են չեղել մեր կարեւորագույն արդյունաբերական ձեռնարկութիւնները, ինչպէս նաև նորակառույցների դրութեամբ և աշխատանքներով: Նույնպիսի դրական բեկումն նկատուում է նաև կուսակցական գաղափարներ և ստորին որդանների աշխատանքների մեջ: Յեթե մինչև 1928 թիվը կուսակազմակերպութիւնները վերականգնեցին իրենց շատ քիչ առնչութիւն ունեցին արդյունաբերական ձեռնարկութիւնների հետ, ապա վերջին յերկու տարում այս խնդրում դրութիւնը հիմնականորեն փոխվեց: Յե՛վ դա Հայկումկուսի կարեւոր հաղթանակներից մեկն է: Բանվորական լայն մասսաները սոցիալիստական շինարարութեան գործին ել ավելի ակտիվ մասնակից դարձնելուն և կուսակցութեան ղեկավարութեան ուժեղացմանն ենք պարտական այն հաջողութիւնները, վոր ունենք արդյունաբերութեան պլանների իրագործման ասպարիզում: Իսկ այդ հաջողութիւններն անվիճելի յեն և ակնբախ:

Հայաստանի արդյունաբերութիւնը վերջացրեց հնգամյակի առաջին տարին՝ ունենալով իր բալանսում արտադրանքի աչքի ընկնող աճում, սարքավորման դրութեան բարելավում, աշխատանքի արտադրողականութեան բարձրացում և ինքնարժեքի իջեցում: Կոնյուկտուրայի լենթարկվող մեր ամբողջ արդյունաբերութիւնը 28-29 թիվն ունեցավ 25.805.000 ռուբլու արտադրանք նախորդ տարվա 16.805.000 ռուբլու փոխարեն—տարեկան աճում 53,6 տոկոսով: Արդյունաբերութեան վորակական ցուցանիշները գերակատարվեցին: Հանրապետական արդյունաբերութեան մեջ

արտադրանքի ինքնարժեքն անցյալ տարի իջավ 13 տոկոսով՝ նախագծված 9 տոկոսի փոխարեն: Աշխատանքի արտադրողականութիւնը բարձրացավ 30 տոկոսով: Սակայն մենք թույլ չեղանք արդիւնաւանի իրացման ասպարիզում: Անցյալ տարի արդյունաբերութիւնը չկարողացավ իրագործել իր պլանն ամբողջութեամբ: Հայաստանի ամբողջ արդյունաբերութեան տարեկան պլանը կատարվեց 92,4 տոկոսով, հանրապետական արդյունաբերութեան գծով՝ 90,2 տոկոսով: Այս բացասական տվյալների գոյացման մեջ հիմնական գերը խաղացից անցյալ տարի Հայպոխից յե՛վ Հայսեֆոսիլը: Դրանցից առաջինը շատ վատ դրութեան մեջ էր նաև վորակական ցուցանիշների իրականացման բնագավառում:

Ներկա տարվա առաջին կիսամյակը ցույց է տալիս արդյունաբերութեան արտադրանքի ավելի բարձր աճում և ինքնարժեքի իջեցում: Հայաստանի ժողովրդական խորհրդի յենթակա 14 ձեռնարկներն այս տարվա առաջին կիսամյակում պիտի տալին 12,828,000 ռ. արտադրանք, մինչդեռ նրանք վերջացրին կիսամյակը՝ հասցնելով արտադրանքը 13,786,000 ռուբլու: Հանրապետական արդյունաբերութիւնը կատարեց իր պլանը 7 տոկոսի գերախտարումով: Անցյալ տարվա առաջին կիսամյակի հետ համեմատած՝ այս տարվա առաջին կիսամյակը ցույց է տալիս արտադրանքի աճում մոտ 70 տոկոսով: Նույն ձեռնարկութիւնների գծով առաջին կիսամյակն ինքնարժեքի իջեցում է տալիս 17 տոկոսով, ծրագրված 12,5 տոկոսի փոխարեն: Առանձնապէս անհրաժեշտ է շեշտել այն հաջողութիւնները, վոր ունի մեր Տեքստիլն այս տարի:

Հայտնի յե, վոր անցյալ տարի Տեքստիլը փակեց իր հաշիվները խաչտառակ արդյունքներով, կատարելով տարեկան պլանի 60 տոկոսը: Կենտրոնական Կոմիտեն հատուկ նամակով դիմեց Տեքստիլի կուսակազմակերպությանը և բանվորներին՝ սրելով նրանց ուշադրությունն արտադրութեան հիմնական խնդիրներին վրա: Յեվ շնորհիվ բանվորների ցույց տված յեռանդի, շընորհիվ հարվածայնութեան և աշխատանքի ավելի լավ կազմակերպման՝ այս տարի Տեքստիլը դուրս յեկավ այն խաչտառակ վիճակից, վորի մեջ նա գտնվում եր անցյալ տարի: Պլանի կատարմամբ, վորակական ցուցանիշների իրագործմամբ Տեքստիլը այսու մեր ուրիշակների ձեռնարկութեանց մեկը կարող ե համարվել: (Մափախարութեանց):

Անբավարար եր յեվ մնում ե գրութիւնը Հայպղնձի ձեռնարկութեան, մանավանդ Ղափանի պղնձահանքերում: Չի կարելի ասել, վոր ԿԿ քիչ ուշադրութիւն ե դարձրել այս խնդրին վրա: Պղնձի արդյունաբերութեան խնդիրները, նրա ղեկավարութեան վերակազմութիւնը, նրա կադրերի ուժեղացումը հաշվետու շրջանում յեղել են մեր ուշադրութեան կենտրոնում: ԿԿ հատուկ նամակ ուղղեց նաև Ալլահ-վերդու և Ղափանի բանվորութեանը և կուսակազմակերպութիւններին: Յեվ թեև տարեցտարի աճում ե պղնձի արտադրանքը, սակայն միանգամայն անբավարար են այդ աճման տեմպերը, շատ յետ ե մնում պլանի կատարումը: Իդուր չեր, վոր վերջերս Յվետմետալուրտոյի վարչութիւնը քննելով Հայպղնձի 28-29 թվի աշխատանքների արդյունքները՝ անբավարար համարեց Հայպղնձի աշխատանքները: Տեսակավորված

հանքի հանույթի պլանն անցյալ տարի կատարվեց միայն 80 տոկոսով: Դեռ մինչև այժմ բավարար զարգացումն չստացան հետախուզական և նախապատրաստական աշխատանքները: Հանքի հանույթի ինքնարժեքն անցյալ տարի իջել ե միայն 5 տոկոսով, ծրագրված 23 տոկոսի փոխարեն: Այս տարվա առաջին կիսամյակի արդյունքները նույնպես շատ անգոհացուցիչ են, մանավանդ Ղափանի հանքերում: Զանգեզուրի կոմիտեի կատարել ե իր պլանն առաջին կվարտալում 89 տոկոսով, յերկրորդ կվարտալում՝ 61 տոկոսով, ապրիլ ամսին՝ 41 տոկոսով: Այս յերեք քաղերը բավական ե հաջողակ հնչեցնելու համար մեր պղնձահանքերի գրութեան մասին, յեվ այդ ահագանքը պիտի հնչեցնի մեր համագումարը: Սխալ կլինի պղնձահանքերի ներկա անբավարար զրութիւնը բացատրել միայն որչեղիւ պատճառներով: Չե՞ վոր հենց վերջերս, որինակ՝ Ղափանում, աշխատանքի պայմանները, բանվորների նյութական-կենցաղային պայմանները լավացել են զգալի չափով: Պղնձահանքերի, մանավանդ Ղափանի ներկա գրութեան հիմնական պատճառներից մեկը մեր ապիկարութեան ե, քաղքեփածութեան, վոյ բավարար կուսակցական յեվ մասսայական աշխատանքը բանվորների մեջ, պրոմ-միութեան և ուղղութեան քույլ աշխատանքը, սոցմիութեան ձեռնարկում ու բյուրոկրատիկ գրութեան, հարվածային շարժման քույլ ծավալումը: Զափազանց բացասական դեր ե խաղում նաև ղեկավար կադրերի անբավարար զրութիւնը, մասնագետ ուժերի չտեսնված հոսունութիւնը, վոր խանգարում ե հանքերի կայուն աշխատանքներին: Պղնձահանքերն իրենց ներ-

կա զբոլթյամբ մեր կուսակցութեան աշխատանքները ընդհանուր ֆոնի վրա ամենասե կետերն են: Պղնձահանքերի զարգացման ներկա զբոլթյունը խայտառակութունն է բոլորիս համար: Հայաստանի կոմունիստական կազմակերպութիւնները պղնձահանքերի արտադրանքի բարձրացման խնդիրը պիտի դարձնեն իրենց ուսագրութեան հիմնական կենսոցը: Ինչ գնով եւ լինի, անհրաժեշտ է անմիջապէս գործնական քայլերի գիմել՝ կայունացնելու համար մասնագետները կազմը եւ ուժեղացնելու համար ղեկավարութիւնները պղնձահանքերի վերաբերմամբ: Անհրաժեշտ է մասամբ զբաղել բանվորներ հրավիրելով, մասամբ նույնիսկ կուսակցական մտերիկացիալի գծով ապահովել պղնձահանքերը բանվորական կազմերով: Պետք է պահանջել կոմբինատների ղեկավարներէջ ավելի նախաձեռնութիւն, արագաշարժութիւն, ձեռնբեցութիւն, ուժեղացնել եւ վերակառուցել կուսակցական եւ պրոֆեսիոնալ աշխատանքները հանքերում, զարկ տալ իսկական հարվածայնութեան, ավելի ուժեղ թափով առաջ տանել հետախուզական-նախապատրաստական աշխատանքները: Մեր կուսակցական կազմակերպութիւնները, մանավանդ Լոռու լեզ Զանգեզուրի կազմակերպութիւնները, պիտի կարողանան մինչեւ սեռեսակաց սարկա վերջը լաւել ուժերը՝ բեկումն առաջ բերելու համար, ինչպիսի պլաններ իրականացման, ճամնապետ լեզ վորակական ցուցանիշների իրագործման ասպարիզում, մինչեւ վոր պղնձի արդյունաբերութեան հիմնական վերակազմութեամբ հնարավոր լինի արագ քայլերով առաջ շարժել պղնձարդյունաբերութեան զարգացման գործում:

Այդպիսով մենք զգալի հաջողութիւններ եւ նրավաճումներ ունենք մեր արդյունաբերական ձեռնարկութիւնների պլանների իրագործման, ինքնարժեքի իջեցման, աշխատանքի արտադրողականութեան բարձրացման բնագավառում: Արտադրանքի հսկայական աճումը, պլանների գերակատարումը ցույց է տալիս, վոր դեռ անսպառ են մեր հնարավորութիւններն այս ասպարիզում: Նոր հաջողութիւններ ձեռք բերելու համար անհրաժեշտ է,

1. եւ ավելի ամրացնել կուսակցութեան արդյունաբերական շինարարութեան վրա:

2. ուժեղացնել արդյունաբերութեան կուսակցական կազմերը վոր միայն քաղաքականապէս, այլեւ տեխնիկապէս ձեռնհաս ընկերներով, համաձայն Համկոմկուսի Կենտկոմի վերջին վորոշման:

3. գործնականում եւ հետեղականորեն կիրառել միանձնյա ղեկավարութիւնը:

4. ավելի ուժեղացնել բանվորական մասսաների ղեկավար մասնակցութիւնն արդյունաբերութեան բոլոր բնագավառներին:

5. զարկ տալ իսկական հարվածայնութեան՝ անխնա խարազանելով կեղծ ու թղթե հարվածայնութիւնը մեր գործարաններում եւ հանքերում:

6. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՅԵՎ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՖՐՈՆՏՈՒՄ

Հաշվետու շրջանում ավարտուից Հայաստանի գյուղատնտեսութեան վերականգնման շրջանը: Ցանքսաշաշտերի ընդհանուր տարածութիւնը նախապատե-

րազմյան 343.700 հեկտարի և Դառնակցության քրե-
 րահույակ սիրապետության քաջանի 75.000 հեկտարի
 փոխարեն հասնում է արգեն 400.000 հեկտարի
 սահմաններին: Ս. Գնասունցների բանակը՝ վերածած
 խոռոհի՝ ճուլն համեմատությամբ կազմում է 855
 հազար, 319.000 յեվ 896,000: Գյուղատնտեսու-
 թյան արտադրանքի ընդհանուր արժեքը ներկայումս
 զգալի չափով գերազանցում է նախապատերազմյան
 դրույթյունը: Այսպիսով մենք արձանագրում ենք գյու-
 ղատնտեսության աճումը, վոր արագանում է մանա-
 վանդ վերջին յերկու տարիներում և մասնավորապես
 հողագործության ասպարիզում: 29-30 թ. տալիս է
 24.300 հեկտար ցանքերի նոր տարածություն, գլխա-
 վորապես խորհրդային և կոլեկտիվ տնտեսություն-
 ների գծով և շնորհիվ նոր ջրաշինարարական կառույց-
 վածքների և գյուղատնտեսության լայն մեքենայաց-
 ման:

Արձանագրելով այս նվաճումները՝ չենք կարող,
 սակայն, չչեղտել անմիջապես մեր գյուղատնտեսության
 զարգացման անբավարար ու անկայուն քափը: Ա-
 նասնապահությունը, վորի զարգացման համար լայն
 հնարավորություններ ունենք, աճում է չափազանց
 դանդաղ թափով, մասնավանդ խոշոր յեղջուրավոր ա-
 նասունների գծով:

Անասնապահության ընդհանուր արտադրանքը
 ներկայումս հազիվ գտնվում է նախապատերազմյան
 յակարդակի վրա: Անբավարար է տեխնիկական բար-
 ձրարժեք՝ մշակութային, ինչպես նաև ալգեգործու-
 թյան զարգացման տեմպը: Արդեն այժմ գոյություն
 ունի զգալի անհամապատասխանություն մեր թեթև

արդյունաբերության հումույթի պահանջի և գյուղա-
 տնտեսության ապրանքային յելույթի միջև, ել չեն
 խոսում քաղաքների և աճող բանվորական կենտրոն-
 ների սպառողական կարիքների բավարարման մասին:
 Այդ պատճառով ել ցերկա ժամանակաքաջանի ամե-
 ցահրասապ խնդիրներից մեկն է այնպիսի անմիջա-
 կան գործառնումների ծավալումը, վոր հնարավո-
 րություն քննեռի կարն ժամանակում զարկ ցալ
 մեր գյուղատնտեսության, մանավանդ ցրա կարեվո-
 րագույն ցյուղերի արագ զարգացման: Յեվ այս խընդ-
 րի յուծումն առաջին հերթին պիտի ընթանա գյու-
 ղատնտեսության սոցիալիսական հասվածի անման
 գծով:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ. — Մինչև
 կուսակցության 6-րդ համագումարը Հայաստանի
 խորհրդային տնտեսությունների դրույթյունը կարելի
 յեր բնորոշել հայտնի առածով — անունը կա, ամանու-
 մը չկա: Յեվ իսկապես, բացի պերմանենտ փառան-
 րից, վորով ամեն տարի փակում եյին իրենց հաշիվ-
 ները մեր միջանի գաճաճ խորհրդային տնտեսու-
 թյունները, ուրիշ բան չեյին տալիս նրանք մինչև
 1929 թիվը: 1929 թվից միայն սկսվում է խորհրդային
 տնտեսությունների բուռն աճումը: Այն ժամանակ,
 յերբ 1928 թվին խորհրդային բոլոր տնտեսություննե-
 րը բռնում եյին 9200 հեկտար տարածություն, 30 թ.
 նրանց տերրիտորիան լայնանում է մինչև 62,000 հեկ-
 տար: 1928 թվի 121 հեկտար ցանքի փոխարեն այս
 տարի խորհրդային տնտեսությունները ցանել են
 5305 հեկտար: 630 խոշոր անասունների փոխարեն
 այս տարի նրանք ունեն 3000 խոշոր անասուն:



Մեծ չափերով լայնացել և խորհրդային տնտեսութ-
յունների մեքենայական բազան, զգալի գումար են
կազմում նրանց հիմնական ներդրանքները:

Սակայն հանգստանալ այս սկզբնական հաջո-
ղությունների վրա չի կարելի վոչ մի դեպքում: Դեռ
հսկայական անելիքներ ունենք խորհրդային տնտե-
սություններն օրինակելի տնտեսական մեծություն-
ներ դարձնելու գործում: Ամենից առաջ անհրաժեշտ
և ամենալուրջ ուշադրությունը դարձնել մեր անաս-
նապահական խորհ. հոգեստրուկների աշխատանք-
ները. մեր 3 գլխավոր անասնապահական
խորհ. տնտեսություններն անցյալ համամիութենական
կազմակերպության—Սկոտովոդի իրավասություն տակ
աշխարհի պայմաններով, վորոնք լայն հնարավորու-
թյուններ են ընձեռում մեր կաթնատնտեսությունների
աղնվացման, կաթնատնտեսության բաղադր լայնաց-
ման գործում: Հոգեփոխումառն ալիտի կարողանա ա-
պահովել այս խորհ. տնտեսությունների ամրացումը
և խոշորացումը: Հոգեփոխումառն ալիտի ուժեղ զարկ
տա նաև թե գոյություն ունեցող դաշտավարական
խորհ. տնտեսությունների զարգացմանը և ամրա-
պնդմանը և թե բարձրարժեք մշակույթների, մանա-
վանդ պտղաբուծության համար նոր խորհ. տնտեսու-
թյուններ հիմնելու աշխատանքներին: Անհրաժեշտ և
նույնպես ամենալուրջ ուշադրություն դարձնել վեր-
ջերս բանվորական կինտրոնների և քաղաքների բու-
սաբույսերի կարիքները հոգալու համար կազմակերպ-
ված մերձքաղաքային տնտեսությունների վրա և, վեր-
ջապես, ժամանակն և արդեն պահանջել, վոր մեր
խորհրդային տնտեսությունները կատարեն իրենց

կարևորագույն մի պարտականությունը, ներառյալ
շրջակա անհատական տնտեսությունների վրա նը-
բանց տնտեսության բարձրացման, կոլեկտիվացման
ուղղությամբ:

ԿՈԼԼԵԿՏԻՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԻՆՍՐԱ-
ՐՈՒԹՅՈՒՆԸ.— Դյուրանտ տնտեսության արտադրողական
ուժերի բարձրացման, զուգը դեպի սոցիալիզմը մը-
ղելու այս հիմնական ճանապարհին չափազանց հա-
րուստ և մեր կուսակցական կազմակերպությունների
փորձը հաշվառելով շրջանում: Իսկապես, նախորդ հա-
մագումարի ժամանակ Հայաստանի կոլլեկտիվ տնտե-
սությունները միացնում էին բոլոր գյուղական տըն-
տեսությունների միայն մեկուկես տոկոսը, ներկա-
յումս նրանք միացնում են արդեն 15 տոկոսը, մոտա-
վորապես այնքան, ինչքան մենք յենթադրում էինք
ընդգրկել ներկա հնգամյակի վերջում: Այս տարվա
հունվարից մինչև ապրիլ ամիսը, կոլտնտեսական
շարժման բուռն աճման շրջանում, մեր կազմակեր-
պությունները գլխավորապես մեջ ընկնելով լիառատ
տուրք տվին «կոլտնտեսական խաղին», կատարեցին մի
շարք կոպիտ սխալներ և կուսգծի ազավաղումներ, վո-
րոնց սպառնչ գնահատականը տրված և Հայկոմիտեի
ժանոթ վորոշումների և բանաձևերի մեջ: Ամենից կա-
րևորն այսօր այն և, վորպեսզի մեր բոլոր կազմա-
կերպությունները, կուսակցության բոլոր անդամնե-
րը վերջնականապես լեզվ պարզորոշ ըմբռնեն այս
ասպարիզում մեր կատարած սխալների բնույթն ու
եղությունը:

Յեղնելով գյուղի հիմնական մասսաների կողմից
դեպի կոլտնտարժույն առաջացած հետզհետե աճող և

նորմալ հոսանքից, այս տարվա առաջին ամիսներում, հաջողութուններից շնորհիվ, մեր ԵՆՏԵԿՈՄԸ սխալ գրույթ սվեց կոլլեկտիվացման հեմպերի ցկացմամբ: Առաջ վազելով և անտեսելով Համկոմիտի հուշվարի 5-ի հայտնի վորոշումը, նա առաջադրեց այնպիսի խնդիրներ և կոլտնտիշնարարության այնպիսի տեմպեր, վորոնք համապատասխանում են միայն ավելի առաջավոր, տեխնիկապես զարգացած ու սոցիալապես շերտավորված հացահատիկային մարզերի ուժերին ու հնարավորություններին: Մենք անթույլատրելի կերպով անտեսեցինք մեր յերկրի մի շարք յուրահատուկ առանձնահատկությունները: Կոլլեկտիվ շինարարությունը մեզ մոտ հուշվարից մինչև ապրիլ ընթացավ այդ ասպարիզում մարքսիստական-լենինյան հիմնական սկզբունքներից վորոշ չափով շեղման պայմաններում (կամավորության սկզբունքի խախտումը, կոլտնտեսության տվյալ շրջանի հիմնական ձևի վրայով թռչելու փորձերը և այլն): Յեվ այս բոլոր սխալներն ու ազավաղումներն անգրագարծան կոլտնտեսության արգյուններին վրա բացասական կերպով:

Քանի վոր այս հարցի մասին մեր համագումարը հատուկ զեկուցում է լսելու, յես կարճ կերպով կանգ կառնեմ կոլտնտիշնարարության ընթացիկ հրատապ խնդիրների վրա: Պայքարելով սխալների և ազավաղումների դեմ և վճռականորեն ձեռնարկելով նրանց վերացմանը, մեք ցերեպալուսա կոլլեկտիվներում միացնում ենք մեր բոլոր ճեմեսություններին 15 օրկոսը: Ըստինքյան սա պատմական նվաճում է և ինչքան էլ աջ ուղղորտյունիստները ցանկանան բացասել մեր հաջողություններն այս ասպարիզում, այդ

նրանց չի հաջողվի: Սակայն գլխավոր խնդիրը կայանում է նրանում, վոր մինչև այժմ մենք չենք կարողացել ապահովել կոլտնտեսություններն անհրաժեշտ զեկավարությամբ, կոլտնտեսությունների ցերեպալության հարցերը, աշխատանքի յեվ ճեմեսության կազմակերպումը մնում է անմեայ գրության մեջ: Սրանով էլ վորոշ չափով բացատրվում են մի շարք հիվանդագին յերևույթներ մեր կոլտնտեսություններում:

Կոլտնտեսությունները կազմակերպելիս բավարար չափով հաշվի չեն առնվել տեղական առանձնահատկությունները, յեղել է շարուն մոտեցում: Շատ տեղերում, ուր անհրաժեշտ պայմանները բացակայում են, աշխատել են անմիջապես և տառացի կերպով իրադործել որինակելի կանոնադրությունը, փոխանակ վորոշ չափով հարմարեցնելու այն տեղական պայմաններին: Այս բոլորը բացասական անդրադարձում է ունեցել միջակ գյուղացուն կոլտնտեսության մեջ ընդգրկելու կարևորագույն խնդրի վրա: Ահա թե ինչու առաջիկա շրջանում չափազանց անհրաժեշտ է ուժեղացնել կենդանի ու գործնական ղեկավարությունը կոլտնտեսությունների վերաբերմամբ, ըստ անհրաժեշտության մտցնել որինակելի կանոնադրության մեջ վորոշ փոփոփոխություններ՝ յեկնելով տեղական պայմաններից, ամրացնելով գոյություն ունեցող կոլտնտեսությունները, լայնացնելով նրանց մեքենայական ու տնտեսական բազան (վարկեր և արտոնություններ), դարձնելով նրանց բոլոր կողմերով որինակելի՝ միջակ գյուղացուն գործով համոզելու և նրանց կոլտնտեսություն ընդգրկելու համար:

ԱՆՀԱՏԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. — Գյուղի սոցիալիստական հաստիքի ամրացումն ու հետագա վերելքն ապահովելու տեսակետից շեշտը դնելով խորհրդային և կոլեկտիվ տնտեսությունների զարգացման վրա, մենք լուրջ մի դեպքում չպիտի անտեսենք անհատական աշխատավորական տնտեսությունը, նրա կարիքները: Մեզ մոտ անհատական տնտեսությունները դեռ կազմում են և վորոշ ժամանակ կմնան հիմնական մեծամասնություն: Մինչդեռ հենց այս զարնանացանի պրակտիկան ցույց է տալիս, վոր մենք աչքի ընկնող թերություններ ունենք անհատական տնտեսությունների սպասարկման, վարկավորման և մեքենայացման ասպարիզում: Ավելին. կոլեկտիվիզմի գլխապետության ժամանակ մեկ կատարեցինք այնպիսի մի սխալ, վորպիսին եր անհատ օգնեստներ, չհավոր լեվ միջակ գյուղացիների պարզ կոոպերատիվ միավորումն ենք անհետմը: Փաստ է, վոր փետրվարին և մարտին գրեթե լրակատար կազմալուծման լենթարկվեցին Հայկուղկոոպի վողջ ցանցը, գյուղվարկային ընկերությունները, արտադրական ընկերությունները և այլն: Դեռ մինչև հիմա չեւ Հայգյուղկոոպը և տեղական կազմակերպությունները չեն կարողացել զգալի բեկումն առաջ բերել պարզ կոոպերատիվ միավորների վերակազմակերպման գործում, մինչդեռ այդ միավորներն են այն նախնական աստիճանները, վորոնց վրայով արժեքելու լեն գյուղի երմնական մասսաները գեպի կոլեկտիվիզմի արունք: Անհրաժեշտ է անմիջապես լեռնողուն աշխատանքի անցնել՝ վերականգնելու համար պարզ կոոպերատիվ միավորումները գյուղում, ապահովել նրանց

հետագա աճումը, չանտեսել անհատական տնտեսությունների կարիքները (հողաշինարարություն, վարկավորում, մեքենայացում, ագրո-տեխնիկություն) և, ինչպես շեշտվում է Համկոմկուսի թեզիսներում, հաստատել կոլտնտեսությունների և մենատնտեսների մեջ աջակցի փոխհարաբերություններ, յերբ անհատ տնտեսությունները չեն հալածվում, ոգնություն են ստանում և ամեն կերպ զբաղվում են գեպի կոլտնտեսություն:

ՎՈՌՈՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒ ԶՐԱՅԻՆ ՏԸՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ. — Մեր յերկրի ջրասակավության և անջրգի մեծ տարածությունների գոյություն պայմաններում հակալական նշանակություն է ստանում վոռոգման գործը: Այս ասպարիզում հաշվետու շրջանում շարունակվել են մի շարք առաջուց սկսված ձեռնարկումներ (Փոքր Մարգարապազ, Օյր լիճ, Շիրջրանցքի Յ-րդ գոթին, Կարենվանք, Խոր-Վիրապի ջրհան կայանը և այլն), և սկսվել են գների վոռոգման հոջակապ աշխատանքները: Կատարված են և կատարվում են հետադոտական-ուսումնասիրական աշխատանքներ Մրազգայանի, Սեվ-Զրի լեվ Զանգիբադարի օրջաններում, վորոնց անմիջապես հետեւելու յեն համապատասխան շինարարական-կառուցողական ձեռնարկումներ: Առաջ են գնում նաև Սեվանի լեվ Մրազաթի հեռագոսությունները, վորոնք մեր յերկրի վոռոգման, ելեկտրիֆիկացման և քիմիական զարգացման համար վճռական նշանակություն ունեն: Այստեղ հիմնական պակասություններն են. 1) աշխատանքների գանդաղ տեմպը (Փոքր Մարգարապազը, վոր հնարավոր եր կառուցել 1—2 տարում, քաշքշվեց

4 տարի), 2) վոռոգվող հողերի վոչ արագ իրացումը, 3) նախնական հետազոտական աշխատանքներում պատասխանատվության թուլությունը, վորի շնորհիվ բամբակի համար նախատեսվող վոռոգվող տարածություններին մի մասը միանգամայն անպետք դուրս յեկավ բամբակի մշակման համար: Առաջիկա շրջանում պիտի ավելի մեծ ուշադրություն դարձնել վոռոգման աշխատանքների վրա, բարձրացնել այդ աշխատանքների տեմպը և անհապաղ իրացման յին-թարկել վոռոգվող տարածությունները:

7. ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ ՄԱՍՍԱ- ՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ-ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ

Մենք գծեցինք ժողովրդական տնտեսություն աճման ընդհանուր պատկերը հաշվետու շրջանում: Այդ ֆոնի վրա աչքի չե ընկնում բանվոր դասակարգի, ինչպես նաև վարձու աշխատանքով զբաղվող այլ կադրերի (մասնավորապես տեխնիկական և մասսայական ինտելիգենցիայի) քանակական աճումը. անպակաս, աշխատանքի վոչ գյուղատնտեսական սեկտորում 26-27 թվին Հայաստանում ունեյինք 42.402 վարձու աշխատող, 27-28 թվին՝ 42.921, և 28-29 թվին՝ 47.940 վարձու աշխատող: Մանավանդ աչքառու յե բանվորական ուժի աճումը շինարարության մեջ (29 տոկոս) և ցենզային արդյունաբերության մեջ (16,3 տոկոս): Աճող շինարարության հետևանքով կրճատվում է գործազրկությունը: 27-28 թվին մեզանում գործազուրկները կազմում էին աշխատողների թվի 18

տոկոսը, 28-29 թվին՝ միայն 10 տոկոսը. առ 1-ն հոկտեմբերի 28 թ. արձանագրված ունեյինք 5.000-ից ավելի գործազուրկ, առ 1-ն հոկտ. 29 թ.՝ միայն 4.000 գործազուրկ: Սրանց հսկայական մեծամասնությունն անվորակ բանվորական ձեռքեր են, կանաչք և անչափահասներ: Ուժեղացնելով սրանց վորակավորման գործը, հնարավոր կլինի շուտով ավելի աննշան չափերի հասցնել գործազրկությունը:

Մեր տնտեսական շինարարության աճման զուգընթաց կուտակյալ ֆազակալությունն ապահովում է բանվորական յեկ աշխատավորական մասսաների ճնշեալ կենցաղային պայմանների ասիճանակալ բարելավումը: Այդ բարելավումն արտահայտվում է ամենից առաջ աշխատավորի բարձրացումով: 28-29 թվին ամբողջ արդյունաբերության մեջ միջին աշխատավարձն ավելացավ 15 տոկոսով: Այս խնդրում ԿԿ-ի դիրեկտիվը կատարվեց գերազանցումով: Աշխատավարձի բարձրացումը հնարավոր յեղավ շնորհիվ աշխատանքի ավելի բարձր մեքենայացման, յետ մնացած խմբակներն առաջ մղելուն և գործարքային սիստեմի լայն կիրառման: Քիչ վարձատրվող (մինչև 50 ռուբլի) բանվորների տոկոսը 27-28 թվի 38-ից՝ 28-29 թվին իջնում է մինչև 15,7 տոկոսի: Աշխատավարձի աճման ծրագիրն այս տարվա 1-ին կիսամյակում ամբողջապես կատարվեց արդյունաբերության մեջ: Հնարավոր յեղավ առաջին, առաջիմ անբավարար, քայլերն անել նաև մասսայական ինտելիգենցիայի, գյուղական ուսուցչության աշխատավորի բարձրացման գործում: Մեր ձեռնարկումներն այս ասպարիզում պիտի շարունակվեն ժողովր-

զական ճեմեստության անմահ, աշխատանքի արտադրողականության բարձրացման գույքը քայքայելով:

Բնակարանային շինարարությունը դեռ մեր իրականությունն է, թեև աստիճանաբար աճում են ներդրանքներն այս բնագավառում: 28-29 թվի 4.900.000 ուրբու փոխարին բնակարանային շինարարության համար այս տարի հատկացվել է մոտ 7 միլիոն ու: Սակայն այնքան չնչին է չեղել մեր ժողովրդական կենտրոնների աճումը, վեր նորմալ միջոցներով անհնար է ամենափոքր չափով իսկ բավարարել սուր պահանջը: Այստեղ անհրաժեշտ են բացառիկ միջոցներ, և այդ մասին պիտի մտածեն կենտրոնական կոմիտեն և կառավարությունը: Պետք է ավելի զարկ տալ նաև աշխատավորական մասսաների խնայողությունների ու նախաձեռնությունների նաև այս ասպարիզում: Ընդհանուր առմամբ լավ աշխատող մեր բնակիչները պիտի կառուցեն ավելի լայն չափով մոբիլիզացիայի չեքարել սեփական միջոցները չեզ ծավալել կոոպերատիվ շինարարությունը:

Սպառնալիցաների աշխատանքներում, վերոնշյալ հարևոր նշանակություն ունեն մասսաների տնտեսական և կենցաղային-կուլտուրական կարիքների բավարարման համար, ունենք զգալի ճգնաժամներ. անընդհատ լայնանում է կոոպերատիվ ցանցը. հաշվետու շրջանում բանվորական կոոպերատիվ ցանցը լայնացել է 86 միավորից մինչև 177 միավոր. գյուղական ցանցը 313 միավորից դառել է 560 միավոր, 69 տոկոսով աճել է փայտանյութի քանակը, բոլոր արև-

տեսությունների 82 տոկոսն ընդգրկված է սպառողական կոոպերացիայի ցանցով. միջին փայլվածքը 6 ու 60 կոպեկից հասել է 11 ուրբու: Շրջանառությունը մի տարում աճել է 37 տոկոսով: Սակայն, չընայած այս քանակական հաջողություններին, սպառողական կոոպերացիան դեռ շատ լիտ է մնում մասսաների աճող պահանջի բավարարման խնդրում. ապրանքատատարարման պակասությունը ծայրաստիճան սրությունը զգացվում է դուրսում: Ռեյեկսիվ գծավորությունները («ապրանքային սով») ավելի խոնավում են, ճեմեստիվ սպառնալիցաների աշխատանքներում: Յեղած հնարավորությունների պայմաններում, ապրանքատարարման գործի ավելի ճշկուն կազմակերպումը հնարավոր է անհամեմատ լավ արդյունքների հասնել: Անցյալ տարի Հաշվող խախտեց գների իջեցման մեր քաղաքականությունը՝ տարվելով հավելյալ ուղու ստանալու տենդինցով: Չափազանց վատ դրություն մեջ է ժողովրդական սննդի գործը:

Այս բոլորը վերջ չափով նսեմացնում են աշխատավարձի նորմալ բարձրացման արժեքը, հնարավորություն չեն տալիս ամբողջապես կիրառել ուսուցող աշխատավարձի բարձրացման մասին մեր կուսակցության դիրքապայմանները: Այդ պատճառով ել սպառնալիցաների աշխատի առաջիկա երջանում — 1) ավելի լավ հիմքեր վրա դնել գյուղի չեզ բանվորական կենտրոնների մասնակառուցման գործը, 2) աճել անխախտ չեզ հեծվողական կերպով գների իջեցման քաղաքականություն չեզ ապահովել ուսուցող աշխատավարձի բարձրացումը, 3) վճարական բեկումն առաջ

բերել ժողովրդական սեփական գործի կազմակերպման
բնագավառում:

Յերկու խոսք ել տնայնագործական կոոպերա-
ցիայի մասին: Կան ընկերներ, վորոնք կոմունիստա-
կան արժանապատվության համար անվայել են հա-
մարում մոտենալ և հետաքրքրվել արհեստատնայնա-
գործական կոոպերացիայի խնդիրներով: Սա սխալ է:
Տնայնագործական կոոպերացիան մեր կարևոր կազ-
մակերպութուններից մեկն է, հսկայական անելիքնե-
րով: Նա ոժանդակ դեր է կատարում արդյունաբերու-
թյան մի շարք ճյուղերի զարգացման համար, զգալի
չափով մեղմում է ապրանքների պահանջը մեր շուկա-
յում: Տնայնագործական կոոպերացիան հաշվետու շըր-
ջանում ունի բազմաթիվ հաջողություններ: Երկնք
միայն, վոր նրա արտադրանքը չեղել է 28 թ. 2,600,000
ռուբլի, 29 թ.՝ 4 միլիոն ռուբլի, և այս տարի նախա-
տեսված է 7,500,000 ռ.: Դժբախտաբար, տարվա ըս-
կըզբին, չերբ բոլորը տարվել էյին միայն կոլտնտշի-
նարարության հոգսով, վորոշ լիկվիդացիոն տրամա-
դրություններ առաջ չեկան տնայնագործական կոոպե-
րացիայի նկատմամբ: Այդ սխալ տենդենցի յուսալն
առնվեց: Այսօր անհրաժեշտ է վերեվից ճեքել ուժե-
ղացնել ուժագործությունը յեզ ղեկավարությունը ճնայ-
նագործական կոոպերացիայի նկատմամբ՝ առաջին
հերթին լայնացնելու համար նրա ցանցը գյուղում:

8. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՇԵՂԻՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁ- ՐԱՑՈՒՄԸ

Մեր կուսակցության լենինյան քաղաքականու-
թյունը, սոցիալիստական շինարարության հաջողու-

թյունները պահպանեցին և ամրացրին քաղաքական
միանգամայն կայուն կացություն: Հասարակական
տրամադրությունների հետագա շերտավորումը գնաց
բանվորական և աշխատավորական լայն մասսաները
մեր կուսակցության շուրջն էլ ալելի լայնորեն հա-
մախմբելու նշանաբանի տակ: Վերցնենք բանվոր դա-
սակարգը. այստեղ մեր կուսակցության հեղինակու-
թյունը և կապերն ամուր եյին և ճեղքա-
վել էլ յե՞ն ամրացել, գարնել անասան: Բանվոր
դասակարգը, յեթե վոչ ամբողջությամբ, գեթ գերա-
կշիռ մեծամասնությամբ ակտիվ կերպով կիրառում է
մեր կուսակցության լենինյան գիծը: Հաշվետու շըջա-
նում Հայաստանի վորեւ ձեռնարկության մեջ չենք
ուսնեցել տնտեսական կամ վորեւ այլ կոնֆլիկտ. ընդ-
հակառակը՝ լայն ծավալ է ստացել մեղանում սոցիա-
լիստական մրցակցությունը, հարվածալին շարժումը:
Հոսանքը դեպի կուսակցության շարքերը գնալով ալե-
լի ու ալելի չե՞ծավալվում անկուսակցական բանվորների
կողմից: Իհարկե, չի կարելի իդեալականացնել բան-
վոր դասակարգը: Կան առանձին ելեմենտներ, անկա-
յուն տարրեր, մանավանդ նորեկ բանվորների մեջ, վո-
րոնք տուրք են տալիս դասակարգային խորթ ազդե-
ցություններին և տրամադրություններին: Բայց իր
հսկայական ու վնասական մեծամասնությամբ լաց-
վոր դասակարգն անվերապահորեն աշխատում ու
պայքարում է կուսակցության գլխավոր գծի
կենսագործման ճեղքաբանի տակ: Թշնամի կուսա-
կցությունները չունեն վոչ մի հող կամ ազդեցու-
թյուն բանվորների մեջ. դաշնակցական թերթերը՝
հույսերը կտրած, մեկ-մեկ «թղթակցություններ» են

տպում մեր «բանվորական կյանքից», բայց նրանց առաջին իսկ տողը ցույց է տալիս, վոր «սեփական թղթակցությունները» թխված են արտասահմանյան սրճարաններում:

Գյուղում ևս ունենք նույնպես միանգամայն կայուն բաղաձայն գրութուն: Այդ մասին վկայում է բազմաթիվ տնտեսական և քաղաքական կամուրանիների զրական յեղքը, աշխատավոր գյուղացիության հետզհետե աճող հոսանքը դեպի կոլտնտեսությունները, աշնանացանի և գարնանացանի հաջող բնթացքը հաշվետու շրջանում: Բայց չի կարելի անհետել, վոր դասակարգային բռնամիջ կարողացավ ոգտագործել մեր սխալներն ու կուսակցության գծի աղավաղումներն՝ ուժեղացնելու համար միջակ գյուղացիության ճանաչումները: Հակակոլտնտեսային տրամադրությունները բավական լայն ծավալ ստացան բազմաթիվ գյուղերում և շրջաններում: Կուլակային և դաշնակցական ելեմենտները տեղ-տեղ փորձ արին վոչ միայն հակակոլտնտեսային շարժում կազմակերպել, այլ և դրան հակախորհրդային բնույթ տալ: Փետրվարին լեվ մարտին վորո՞ւ վայրերում մեքե կանգնած էյեքե միջակի հեռ գաւիթի խախտման սպառնալիքի առաջ, լեվ սխալ կլիներ կոծկել լեվ բերազնահատել այս հանգամանքը: Դեռևս փետրվարին սկսված պայքարը կուսակցության գծի աղավաղումները վերացնելու համար՝ մարտին և ապրիլին ավելի վորոշակի և վճռական կերպարանք ստացավ: Այժմ այդ բնագավառում հիմնական բեկումն արգեն կատարված է: Սխալների ուղղման համար ծավալվող աշխատանքը մեծ փոփոխություն առաջ բե-

րեց գյուղի հիմնական մասսաների մեջ հողուտ մեղ: Վերականգնվեց խորհրդային իշխանության տեղական որդանների միջանի տեղերում ընկած հեղինակությունը: Կուլակության պրովոկացիաներին չենթարկված վորոշ գյուղացիներ իրենց առորյա աշխատանքին անցան: Գյուղացիության ներկա ճանաչում է գարնանացանի պլանի հաջող բերացքը մեղանում: Ո՞վ կարող է ժխտել այնպիսի մի փաստի նշանակությունը, վորպիսին է բամբակացանքի կատարումը առ 20-ը մայիսի 48.300 հ. տարածությունը: Բամբակի հարյը դասակարգային պայքարի առարկա դարձավ: Կուլակները և դաշնակցական մաժուլն արտասահմանում կատարել պայքար սկսեցին բամբակացանի դեմ: Գյուղի հիմնական մասսաներն արժանի պատասխանը տվին դաշնակ-կուլակային այդ պրովոկացիաներին: Ցանքադաշտերի զգալի բնդարձակումը բազմաթիվ շրջաններում, բատրակային և չքավորական շերտերի լայն հոսանքը դեպի կուլաշարքերը նույնպես իրենց հերթին գալիս են ապացուցելու, թե վորքան բարձր է կուսակցության և խորհրդային իշխանության հեղինակությունն ու հմայքը գյուղի հիմնական մասսաների շրջանում:

Շարունակելով անողոր պայքար կուսակցության գծի անաղարտ կիրառման համար, վերացնելով կատարված բոլոր սխալներն ու աղավաղումները, անշեղ իրականացնելով բանաձևերը և այդ հիման վրա ամբարցնելով մեր դաշինքը միջակ գյուղացիության հետ, պիտի կարողանանք առաջիկայում ամբողջովին մեկուսացնել կուլակությունը գյուղի հիմնական

մասսաներից՝ ապահովելու համար վոչ միայն չքա-
վորության, այլև միջակ գյուղացիության ամենալայն
մասսաների ավելի արմատական շրջադարձը դեպի
սոցիալիզմ:

Յեթե մոտենանք ինտելլիգենցիայի քաղաքական
տրամադրությունների գնահատականին, չինք կարող
չարձանագրել գոյություն ունեցող շերտավորման ա-
վելի զարգացումը մեր ոգտին: Նախորդ համագումար-
ում արձանագրեցինք մասսայական ինտելլիգենցիա-
յի հիմնական ու մեծագույն մասի շրջադարձը դեպի
սոցիալիզմ, այսուր արգեն կարող ենք բնորոշել նրա
ակտիվ ու գիտակցական մասնակցությունը սոցիա-
լիստական շարժումներին: Սոցիալիստական ար-
շավի, դասակարգային թշնամու դեմ ուղղված բոլոր
ֆրոնտներում մեզ հետ, մեր շարքերում են մասսա-
յական ուսուցիչը, գյուղատնտեսը, խրճիթվարը: Սրա
լավագույն ապացույցը կարող է հանդիսանալ այն
փաստը, վոր դադարած կուլակը հաճախ տարբերու-
թյուն չի դնում կուսակցական և անկուսակցական
ուսուցչի կամ գյուղատնտեսի միջև: Կուլակի կատա-
ղության յերբեմն գոհ են դառնում մեր մասսայական
ինտելլիգենցիայի լավագույն ներկայացուցիչները, և
մեր պարտք է ել ավելի մոտեցնել այդ ինտելլիգեն-
ցիան մեր կուսակցությանը, բարելավել նրա առ-
ևտեսների պայմանները, ավելի լայնորեն գրսեվորել
նրա ակտիվությունը մեր սոցիալիստական շարժ-
մանը: Այլեվայլ Ֆրոնտներում:

Վորպես բնորոշ յերեույթ պիտի արձանագրել
նաև զգալի բեկումը բարձրորակ ինտելլիգեն-
ցիայի (ինժեներներ, բժիշկներ, արվեստագետներ և

այլն) տրամադրությունների մեջ: Յեթե առաջ այս
շերտի բացարձակ մեծամասնությունը կանգնած էր
այսպես կոչված «չեղոքության» կամ «լոյալ աշխա-
տանքի» հողի վրա «շինարարության» համար, ապա
ներկայումս նրանցից շատերն սկսում են շրջադարձ
կատարել դեպի սոցիալիզմի կառուցման ակտիվ
ու գիտակից մասնակցությունը: «Լոյալության» սա-
ռուցն սկսել է հալվել: Այս մասին վկայում է թե-
կուղ այն փաստը, վոր վերջերս մենք ստացանք և
շարունակում ենք ստանալ դիմումներ բազմաթիվ
բարձրորակ ինտելլիգենտ ուժերից՝ կուսակցության
մեջ ընդունվելու համար: Միայն կլինի բացատրել այս
յերեույթի աղարտավոր միտումներով: Մեր աշխա-
տանքը, սոցիալարարությունը վերափոխում է նույ-
նիսկ նրանց, վորոնք անցյալում ամուր կապված են
յեղել կապիտալիստական աշխարհի հետ: Գրական առ-
պարիզում մենք կազմակերպեցինք խորհրդային գը-
րողների ֆեդերացիա, վորի շուրջն այսուր համախմբ-
ված են բոլոր կենսունակ և լավագույն գրական ու-
ժերը:

Դասակարգային պայքարի սրումը, սակայն, չէր
կարող ինտելլիգենցիայի շերտավորման վրա չազդել
նաև թշնամի ու անլույս ելեմենտների աշխուժացման
ուղղությամբ: Ինտելլիգենցիայի վերնաշերտի՝ ճիշտ
է՝ փոքրաթիվ մի մասը, վոր չի ուղում կտրել իր կա-
պերն անցյալի հետ, նացիոնալիստական ելեմենտնե-
րը, նրանք, վորոնք տնաբույծ դոնքիշտների նման
իրենց վրա յեն վերցնում «ազգի թե ժողովրդի» ներ-
կայացուցչի դերը, դժգոհ են և անբավական մեր քա-
ղաքականությունից: Այս կամ այն ձևով, վախկոտ

փափսուկներ ժնոցով նրանք արտահայտում են կու-
լակային և բուրժուական տարրերի զգոնությունը,
փորձ են անում թունավորել մեր հասարակական
մթնոլորտը: Նրանք, այդ թիված նացիոնալիստները,
վորակում են մեր ազգային քաղաքականությունը
վորպես ռուսացման քաղաքականություն: Ինքնի-
զեցիայի այս մասի նկատմամբ մեր վերաբերմուն-
քը ամբողջապես պիտի բլթի պրոլետարական գիկ-
սասունայի ահողո՞ւ ունենցենք, յե՞վ այս մասին մենք
պիտի հայտարարենք առանց բազցնելու: (Փափահա-
րուքունենք):

Շարունակելով պայքարն աշխատավորական ին-
տելիգենցիայի պրոլետարական վերադաստիարակման
համար՝ մենք անխնա չմնանք բոլոր նրանց հանդեպ,
վորոնք յերազում են խորհրդային Հայաստանի փո-
խարեն մի որ ազգային-դեմոկրատական Հայաստան
տեսնել:

9. ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Հաշվետու շրջանում այս ասպարիզում մեր հիմ-
նական խնդիրն այն էր, վորպեսզի վերակառուցենք
մեր մասսայական կազմակերպությունները, նրանց աշ-
խատանքի տեմպը, ձևերն ու մեթոդները, համաձայ-
նեցնելու համար ռեկոնստրուկտիվ շրջանի պահանջ-
ներին:

Ինչպես հայտնի յե, առաջին տեղը մասսայական
կազմակերպությունների մեջ բռնում են մեր պրոֆես-
սիոնալ միությունները: Պրոֆմիությունների հերթա-

կան անելիքը պիտի լինեն վերակառուցել իրենց աշ-
խատանքներն այնպես, վորպեսզի ապահովվի բանվո-
րական և աշխատավորական մասսաների ավելի ակ-
տիվ ու ղեկավար մասնակցությունը սոցիալաբարու-
թյան մեջ: Դժբախտաբար չենք կարող պարծենալ
այս ասպարիզում այժի ընկնող հաջողությամբ: Վեր-
ցընենք սոցիալիստական մրցումը և հարվածային շար-
ժումը: Մեր բանվորների հսկա մեծամասնությունը
ժամանակին համակվեց և վոգեորվեց այս գաղափար-
ներով. սակայն պրոֆմիությունները, մանավանդ ըս-
կըզընական շրջանում, չկարողացան գլխավորել այդ
շարժումը, դնել նրան կազմակերպված հունի մեջ.
այդ պատճառով էլ սոցիալիստական մրցումը մեղա-
նում դեկլարատիվ բնույթ ստացավ, իսկ հարվածա-
յին շարժումը, քանակով վոչ այնքան ծավալված, շատ
անգամ էլ ձևական մի յերեւոյթ էր: Այս տարվա լե-
նինյան հավաքի ժամանակ սոցիալիստական մրցումը
հասավ ավելի բարձր աստիճանի. զգալի չափով ավե-
լացավ հարվածայինների թիվը: Ներկայումս այս աս-
պարիզում ամենամեծ պակասն այն է, վոր քե կու-
սակցական կազմակերպությունները յե՞վ քե մանա-
վանգ պրոֆմիությունները բավարար չափով չեն ղե-
կավարում սոցմրցման հարվածային շարժումը, վոչ
էլ կասարում նրա արգյունցների ահեւածեւս հաւա-
ռումը: Այդ պատճառով էլ կեղծ հարվածայնությունը
այսօր բավական տարածված յերեւոյթ է: Արտադրա-
կան խորհրդակցությունները, վորոնց աշխատանքն էլ
ավելի պիտի ծավալվի սոցմրցության նպաստավոր
պայմաններում, աշխուժության նշաններ քիչ են ցույց
տալիս: Անբավարար է բանվորների սիստեմատիկ մաս-

նակցութիւնը նրանց աշխատանքներին. պատճառը՝ կազմակերպչական թերութիւններ, արտօրհրդակցութիւնների աշխատանքի թերագնահատումը մեր շատ տնտեսավարների կողմից:

Այդպես, ուրեմն, մասսայական աշխատանքների հիմնական թերութիւնը պրոֆմիութիւնների գծով՝ այդ ցրանց գանգաղ վերակառուցումն է, թույլ տեսնելով, հեծի ձեւակառուցյալն ճշգրտմը ցուրի, աշխատանքային ցուցի ցուր ձեւերի ցկայմամբ: Այդ բոլորով հանդերձ մեր պրոֆմիութիւններն անցյալ տարվա համեմատութեամբ վորոշ չափով կարողացել են աշխուժացնել տնտեսական-արտադրական աշխատանքները: Նրանք մեծ աշխատանք տարան գյուղում, հաշտութեամբ ավարտեցին կուլայմանագրերի կամպանիան: Մնում է, վոր պրոֆկազմակերպութիւններն առաջիկա շրջանում, կուսկազմակերպութիւնների ղեկավարութեամբ, կարողանան իսկապես վերակառուցել աշխատանքները, ընդհուպ մոտենալ արտադրութեան, ավելի լայնորեն ծավալել կուլտուրական աշխատանքները, չիտ չմնալ, ալլ գլխավորել մասսաների յեռանդը սոցշինարարութեան գործնական աշխատանքներում:

Հայաստանի կոմսոմոլը հաշվետու շրջանում կարողացավ, նկատի ունենալով նախորդ շրջանի սխալների դասերը, ամրանալ ու աշխուժացնել աշխատանքը յերիտասարդութեան մեջ: Նա վորոշ չափով կատարել է արդեն շրջադարձ դեպի տնտեսական-արտադրական ֆրոնտը: 28 թ. 25.000 կոմյերիտականների փոխարեն մենք ունենք ներկայումս մոտ 35.000 կոմյերիտականներ: Աճել է կոմսոմոլի կազմում բանվորների տոկոսը՝ 16—18, բարակներինը՝ 14—20 տո-

կոս: Աճել է կուսկորիզը կոմսոմոլում: 28 թվի 609 կոմսոմոլիստների փոխարեն 29 թվին մենք ունենք 1139 կոմսոմոլիստներ Հայաստանի կոմսոմոլի շարքերում: Կոմսոմոլի ամենակարեւոր նվաճումներից մեկը հաշվետու շրջանում՝ նրա տնտեսական-արտադրական աշխատանքներն են արդյունաբերութեան մեջ: Կոմսոմոլիստները հարվածային շարժման առաջամարտիկներն են:

Մի շարք լավագույն հարվածային կոմսոմոլիստական ընկերների որինակելի սոցիալիստական աշխատանքի կողքին, սակայն, դեռ կան կեղծ հարվածայնութեան, դասաւրջութեան, թափթփվածութեան խայտառակ ու աղաղակող չերեւութներ, վորոնց դեմ կոմսոմոլը պիտի պայքարի ավելի մեծ յեռանդով: Թույլ են կոմսոմոլի գլուղական աշխատանքները: Դասական կարգային պայքարում կոմսոմոլի գլուղական միջանի ողակներ չարդարացրին իրենց մարտական կոչումը: Կոմսոմոլը գլուղում դեռ չի կատարել շրջադարձ դեպի գլուղատնտեսութեան սոցիալիստական վերակառուցման կոնկրետ խնդիրները: Շատ ցածր է գլուղական աշխատանքների վորակը:

Հայաստանի կոմսոմոլը պարտավոր է առաջիկայում վերացնել այս հիմնական բացերը՝ ավելի ծավալել համար պայքարը չերիտասարդութեան կոմսոմոլիստական դասաւարակութեան համար:

Հայաստանի պիոներական կազմակերպութիւնը 6 ըդ համագումարի ժամանակ ապրում էր վորոշ դժվարութիւններ, վորոնք այժմ նա հիմնականում հաղթահարել է և ավելի ամրացել: Այն շրջանի 29.000-ոց պիոներական ներկայումս միացնում է իր շարքերում

62.000 պատանիներ: Սա մեծ նվաճում է, բայց յեթե հիշենք, վոր Հայաստանում կան 270.000 պիոներական հասակի պատանիներ, պարզ կլինի, վոր Գեորգիական քանակական աճման ասպարիզում մեր պիոներին դեռ շատ բան ունի անելու: Թե կոմսոմոլի, քե պիոներական կազմակերպությունների նկատմամբ գեա անբավարար է մնում կուսակցական ղեկավարությունը: Դեռ չենք կարողացել նյութական անհրաժեշտ պայմաններ ստեղծել պիոներական կազմակերպությունների համար: Պահանջվում է ավելի հոգատար և ուշադիր վերաբերմունք. պե՛տք է անպայման մի շարք զործնական միջոցներով բարձրացնել պիոներական կազմակերպությունների ղեկավար կազմերի մակարդակը:

Անբավարար դրություն մեջ է մասսայական աշխատանքը բանվորների չեմ գեղջկուհիների մեջ. գյուղում դապակարգային թշնամին, կոլխոզային շարժումը վիժեցնելու նպատակով, կարողացավ վարպետներն ոգտադործել գեղջկուհիների հետամնացությունը, նրանց թույլ կազմակերպումը. այս բոլորը, չեթե կուղեք, հասուցումն է այն անբույսերի վերաբերմունքի, վոր ցույց են տալիս գեռ միճեմ այժմ մեր ռաս կազմակերպությունները գեպի աշխատանքը կանանց մեջ: Բանվորուհիների և գեղջկուհիների մեջ տարվող աշխատանքի կարեորագույն ձևերից մեկը մնում է պատգամավորական ժողովը: 28—29 թվի 345 պատժողովների դիմաց մենք ունենք այժմ 438 պատժողովներ, վորոնք ընդգրկում են մոտ 14 հազար բան-գեղջկուհիներ: Սակայն թույլ է պատժողովների աշխատանքների վորակը: Հաշվետու շրջանում ղեկա-

վար աշխատանքի չեն առաջ քաշվել 31 կանայք, վոր-պիսի գիծը պե՛տք է շարունակել ավելի մեծ համար-ձակությամբ: Մեր բոլոր կազմակերպությունների մասսայական աշխատանքների հիմնական ողակներից մեկը պիտի գառնա աշխատանքը կանանց մեջ:

Հաշվետու շրջանում մենք կազմակերպեցինք բազմաթիվ մասսայական կամպանիաներ քաղաքում և գյուղում: Հիշենք միայն պետապարատի դոման աշխատանքները, վորոնք սկսվեցին և շարունակվում են աշխատավոր սկան մասսաների ամենալայն և ակտիվ մասնակցությամբ: Նույն ժամանակամիջոցում մենք պրոֆմիությունների գծով առաջ քաշեցինք 287 բան-վորներ: Իհարկե, դոման աշխատանքներն անթերի չեղան: Գլխավոր բացը նրանումն էր, վոր մեր ռաս հիմնարկներում չկարողացանք զուգակցել աշխատանքները հիմնարկությունների ռացիոնալացման աշխատանքների հետ:

Հասարակական մեր մյուս կամավոր կազմակերպություններն ընթացիկ շրջանում ցույց են տալիս քանակական մեծ աճում. նրանք թափանցել են արդեն ամենահեռավոր և հետամնաց գյուղերը. սակայն աշխատանքների վերահսուցման գծով քիչ բան են արել. վոչ ճկուն և դանդաղաշարժ են նրանց ղեկավար որդանները: Այդ կազմակերպությունների աշխատանքի բովանդակությունը յետ և մնում նրանց քանակական աճումից:

Ամփոփելով այս ամենը, պիտի տեսնեք, վոր մասսայական աշխատանքների ներկա դրությունը, մասնավորապես վորակը, դեռ շատ յետ և մնում ներկա շրջանի պահանջներից: Մասսայական աշխատանք-

ներն առաջիկայում պիտի կազմեն մեր հատուկ ուշադրութեան առարկան: Պէտք զգո՞ւմք մասնավորապէս պիտի օտարման մեր պրոֆիտըրուցները, վորոնք ամենից շատ յետ են մնացել իրենց աշխատանքների վերակառուցման ասպարիզում:

10. ԱՎԵԼԻ ՍՐԵԼ ՊԱՅՔԱՐԻ ԶԵՆՔԵՐԸ ԴԱՇՆԱԿԻՉ-ՍԻ ԴԵՍ

Իդեոլոգիական ֆրոնտում հիմնական թշնամին մարտնչող նացիոնալիզմն է, Հայաստանի կուլակուլթյան և հայ բուրժուազիայի շահերի ու ձգտումների արտահայտիչը՝ Դաշնակցութիւնը: Հաշվետու շրջանում կայացաւ այդ կուսակցութեան 11-րդ համագումարը, վոր մի ավելորդ անգամ ևս մերկացրեց այդ կուսակցութեան ճշգրտակեցութիւնը, միջազգային իմպերիալիստներին զեմքը: Նորը, վոր կարելի է արձանագրել այս ասպարիզում, Դաշնակցութեան վորոշ աշխուժացումն է: Սա անմիջական արդունք է Խորհրդային Միութեան և իմպերիալիստական աշխարհի միջև հակասութիւնների սրման: Պատերազմի վտանգի ուժեղացումը թեւովորում է դաշնակցական արկածախնդիրներին: Նրանք միշտ պատրաստ են շուկա հանել արտասահմանի հայ աշխատավորութեան անգիտակից մասը վորպէս թնդանոթի միս միջազգային իմպերիալիստական բանակների համար: Դաշնակցութիւնը տենդադին պատրաստութիւններ է տեսնում՝ կատարելու համար իր՝ վորպէս իմպերիալիստների վարձկանի՝ ստորաքաղաքը դերը: Նա իր համագումարի բերանով «վերջանալու մոտ է նկատում վերակառուցման և ուժերի ամփոփման շրջանը

և ժամանակը հասած է համարում՝ աշխուժացնել պայքարն արտաքին ֆրոնտների վրա»: Քաջ Նազարին հատուկ «խրոխտութեամբ» նրանք «իրենց պայքարի ճամպին առաջին ուժը համարում են Խորհրդային Ռուսաստանը»:

Հայաստանի աշխատավորները չեն, վոր պիտի զարմանան այս հայտարարութիւնների վրա: Նրանք լավ են ճանաչում Դաշնակցութեան արցունքոտ ու գիշատիչ դեմքը, վորի ճակատին դրոշմված է իմպերիալիստական լակեյի տնջնջլի կնիքը: Մենք միշտ ել պնդել ենք, վոր Դաշնակցութիւնը, վորպէս հայ բուրժուազիայի շահերի պաշտպան, անկախ իր ֆրազեոլոգիայից, միշտ ել պատրաստ ունի ժանգոտած սրերը՝ ուղղելու համար Խորհրդային իշխանութեան դեմ: Յեւ չեթեւ այդ սրերը չեն շարժվում, վոչ թե այն պատճառով, վոր դաշնակները չեն ուզում գործի անցնել, այլ վորովհետեւ անգոր են: Յերկրում, բացի կուլակութիւնից և հին աշխարհի այլ չնչին մնացորդներից, նրանք չունեն վոչ մի հենարան: Մեր բանավորները, աշխատավոր գնդակակցութիւնը, ինտելիգենցիան, չերիտասարդ սերունդն անեծքով և բռնացքը սղմած են հիշում Դաշնակցութեան մասին: Արտասահմանում ևս գնալով ավելի և ավելի լին խաբիվում Դաշնակցութեան դիրքերը: Իրենց իսկ խոստովանութեամբ նույնիսկ «դաշնակցական մասսան չի հավատում իր առաջնորդներին. ընդհակառակը, հակված է հակա-Խորհրդային դիրքերից հրաժարվելուն և չենթարկվում ե Խորհրդային շինարարութեան մասին լեղած ֆուսսակար ու շինծու լուրերի քայքայիչ ազդեցութեան»: Յեւ իսկապէս, ինչքան ել ամպագոռոգու են հնչում

Դաշնակցութեան համագործակցութեան հայտարարութիւնները, այնքան ավելի պարզ եւ այդ կուսակցութեան ներքին փոփոխումը եւ ներսումը: Վրացյանը, վոր Ամերիկայի դաշնակ կողմակերպութիւնների «փրկութեան» համար այնտեղ անցավ խաբէլու համար հայ բանվորներին, սովետականութիւններ եւ անում այն մասին, վոր՝ վորովհետեւ «Հայաստանը գտնվում եւ խոր անդունդի եւ կարմիր սատանայի միջեւ», ապա դաշնակները նախընտրում են «կարմիր սատանային» եւ չեն ուզում ակտիւ պայքար մղել Սորհրդային Հայաստանի դեմ: Այս գիրքը շինծու չեւ սկզբից մինչեւ վերջը եւ նպատակ ունի մոլորեցնել միամիտ շարքային դաշնակներին, վորոնց նուշխիսկ գայրացնում եւ դաշնակ լիգերների հակախորհրդային ընթացքը: Վրացյանին դժվար չեւ ցույց տալ այն հեռագրերի պատճենները, վորով նա կարտրեքիր փաշաներից զինված ուղևորութիւն եր խնդրում Սորհրդային Հայաստանի դեմ պայքարելու համար: Ըստ ելութեան դաշնակ ղեկավարները հետապնդում են մի նպատակ՝ համագործակցութիւն ստեղծել ամեն մի հակահեղափոխական ուժի հետ, վորտեղից վոր հնարավոր եւ, լիզու գտնել համառուսական հակահեղափոխութեան հետ, կաղմել համադրային ձակաուտ «Երնքնապաշտպանութեան» զիմակի տակ դավեր լարել Սորհրդային Հայաստանի դեմ. նրանք միաժամանակ իմպերիալիստներին նոր ուժեր են տրամադրում՝ հանձինս քրդական շարժման եւ Սյուրիայի ու Լիբանանի հայ գաղթականներին ծախում իմպերիալիստներին՝ «պայքարելու պրոլետարիատի շահերի համար տեղացի արարները դեմ, վերջինիս անկարգութիւնների եւ աղստամբութիւնների ժամանակ»:

Ահա Դաշնակցութեան գաղանային դեմքը: Մնում եւ եւ ավելի սեւ պայքարի մեր գեները Դաշնակցութեան դեմ: Այդ գծով ամենից առաջ հիշատակներ արտասահմանի հայ բանվորների եւ կոմմունիստական կուսակցութիւնների աշխուժ պայքարը Դաշնակցութեան դեմ: Մասնավորապես հիշատակութեան արժանի յի Ամերիկայի կոմկուսակցութեան հայկական հատվածի վճռական պայքարը՝ աղատելու համար հայ բանվորներին աղգայնական ճահճից: Դժվար պայմաններում, բանվորական կռիւներով նրանք հրատարակում են հատուկ թերթ, վոր իր բալլերիկյան պայքարով մեր ջերմ վողջույնին եւ գնահատականին կարող եւ արժանանալ: (Ծափահարութիւններ):

Դաշնակցութեան դեմ պայքարի յերկրորդ հատուկ դեմքը պրոլետարիատի դիպրոտուրայի պատմիչ ձեռքն եւ, Պիտքադվարչութիւնը, վոր իրեն հաւուկ մարտուհակութեամբ լեւ վճռակահուրքամբ տաւում եւ իր գործը՝ կասաւելով մեր բանվորագուղացիական մասսաների կամքը: Այս ստպարիդում մի բան կարող ենք տեսել. — մեր Պիտքադվարչութիւնը, վորպես միշտ արթուն պահակ, հետագայում եւ կապահովի մեր շինարար աշխատանքի համար խաղաղ պայմաններ: Նրա ձեռքը չի դողա լիբերք հարվածելու համար ակտիւ թշնամուն: (Բուռն ծափահարութիւններ):

Յեւ վերջապես մարտական նացիոնալիզմի, դաշնակիդմի դեմ եւ ուղղված իդեոլոգիական պայքարի մեր հարուստ արտենալը՝ մեր կուլտուրական շինարարութիւնը, մամուլը եւ այլն: Անյննք այդ աշխատանքների դնահատականին:

11. ԿՈՒՆՏՈՒՐԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԻ- ԶՈՒՄ

Հաշվետու շրջանում առանց չափազանցության կարելի չե արձանագրել, վոր կատարվել է հսկայական աշխատանք կուլտուրական շինարարության ասպարեկում: Ավելորդ ենք համարում մանրամասն պարզաբանել, վոր ժողովրդական տնտեսության արագատեմպ վերելքի հիմնական խոչընդոտներից մեկն է մեր կուլտուրական հետաֆնացությունը և վորակյալ կադրերի պակասը: Առանց լուծելու այս յերկու հիմնական խնդիրները՝ անհնար է ապահովել մեր հետագա նորմալ առաջխաղացումը: Ի՞նչ ենք արել և վերոնք են մեր մարտական խնդիրներն այս ուղղությամբ:

ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՈՒՄ.—Նախքան խորհրդային իշխանության հաստատումը Հայաստանում՝ գրագիտությունը կազմում էր միայն 30 % վորն այժմ գրեթե կրկնապատկվել է. 28—29 թ. վերացրել ենք 30.000 հոգու անգրագիտություն: Այս տարի ընդգրկված են 68.000 հոգի. այստեղ մենք չենք կարող չհիշատակել խորհրդային հասարակայնության, մասնավոր մեր մասսայական ուսուցչության լայն և ակտիվ ոժանդակությունը անգրագիտության վերացման գործում: Հասարակայնության մասնակցությունն այս խնդրում առաջիկայում էլ ավելի մեծ չափով պիտի դրսևորվի, վորովհետև առանց զրան անհնար է վճել այնպիսի բարդ մի խնդիր, վորպիսին է անգրագիտության լրիվ վերացումը միջանում: Լայնացնելով պետական բուլժեյի հասկացումները մի կողմից և հասարակական ճախաձեռնությունը մյուս կողմից,

մենք գործնականորեն հաջ պիտի գնենք այս իսկ հնգամյակի վերջում՝ դարձնել խորհրդային Հայաստանի ամբողջ աշխատավորությունը գրագետ: Դնելով այս մարտական խնդիրը՝ մեր բալլիկյան վճռականությունից պիտի լծվենք նրա իրագործմանը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՐՏԱԴԻՐ ՈՒՍՈՒՄ.—Ժամանակն է, վորպեսզի մենք նույնպես ընդհուպ մոտենանք մեր կուսակցական ծրագրի այն մի կարևոր կետի իրագործմանը, վոր պահանջում է «անցնել ձրի, ընդհանուր և պարտադիր պոլիտեխնիկական կրթության մինչև 17 տարեկան չերկու սեռի բոլոր չերեխաների համար»: Միայն պարտադիր ուսման միջոցով է, վոր կարող է կարգինալ կերպով լուծում ստանալ անգրագիտության վերացումը, աշխատավորական մասսաների կուլտուրական և քաղաքական վերելքի այս անհրաժեշտ նախապայմանը: Մինչդեռ այս տարի մեր դպրոցական ցանցով ընդգրկված է 8—11 տարեկան չերեխաների 66 %-ը, ըստ ծրագրի, միայն 33—34 թվին չենթագրվում և անցնել պարտադիր ուսման: Աշխատանքների նման օեմպը պիտի համարել անբավարար: Մենք պիտի ձգտենք հենց այս տարի 8 տարեկանների համար պարտադիր ուսման պայմաններ ստեղծել ամբողջ Հայաստանում, բանվորական շրջաններում հենց այս տարի անցնել 8—11 տարեկանների պարտադիր ուսման և, վերջապես, կրճատել ընդհանուր ուսման անցնելու ժամկետը, խնդիր դնելով հասնելու նրան 31—32 թվին: Սա պահանջում է ուժերի մեծ լարում և մեծամեծ միջոցներ: Մենք պիտի աշխատենք ճարել այդ միջոցները, վորովհետև այլ կերպ մեր չերկրի սոցիալիստական վերելքը կհանդիպի խոշոր դժվարությունների:

Միջին վորակի կազմեր պատրաստելու համար հաշվետու շրջանում բաց արինք 7 նոր տեխնիկումներ. զգալի չափով բարելավվել է ուսանողների սոցիալական կազմը. 6-րդ համագումարի դիրեկտիվը տեխնիկումների և բարձր դպրոցների կազմի բանվորականացման մասին՝ իրագործվում է բավարար չափով, սակայն լիակատար անցումը միջին վորակի կազմերի պատրաստման տեխնիկական անհրաժեշտության հետևանքով դանդաղանքներով իրականացվում է (մոտ 22 նոր միավոր)՝ հնարավոր կլինի վորոշ չափով միայն բավարարել այս պահանջը:

ԲԱՐՁՐ ՎՈՐՈՒՄԻ ԿԱԶՄԵՐ. — Պետհամալսարանի սոցիալական հաշվետու շրջանում բարելավվեց վորոշ չափով. բանվորները համալսարանի ուսանողների մեջ 27—28 թ. 5 տոկոսի փոխարեն կազմում են 10,3 տոկոսը, բարձրագույնը 0,3 տոկոսից հասել են 0,5 տոկոսի. աճել է նաև չքավոր գյուղացիների թիվը: Փոքր ինչ բարելավվել է ուսանողների տեխնիկական դրուժությունը. թողականները՝ 13,5 տոկոսի փոխարեն կազմում են 29—30 թվին արդեն 30,6 տոկոս: Առհասարակ մեր պետական համալսարանը կարողացավ ավելի աշխուժացնել և բարձրորակ դարձնել իր աշխատանքները: Լավացել է դասախոսական կազմը, առաջ են քաշվում չեքիտասարդ կադրեր, ընդարձակվել են գիտական հետազոտական աշխատանքները. լայնացել է համալսարանի բյուջեն. 27—28 թ. 593.998 ռ փոխարեն համալսարանն այս տարի ունի

1.215.471 ռուբլու բյուջե: Թերապևտիկ մեր համալսարանի դերն ու նշանակությունը վորակյալ կադրեր պատրաստելու ուղղությամբ շատ մեծ սխալ կլինի: Անհրաժեշտ է միայն, վորպեսզի մեր տնտեսական և այլ որդանները, մասնավոր ժողովուրդը, ավելի մոտենան համալսարանին:

Ներկայումս յենթադրվում է վերակազմակերպել մեր համալսարանը նոր հիմունքներով. կազմակերպվում են գյուղատնտեսական, բժշկական, տեխնոլոգիական և մանկավարժական առանձին ինստիտուտներ: Այստեղ անհրաժեշտ է մեր սեփական լիակատար ուղղության կազմից մեծ նախաձեռնություն, միջոցների կոզմից մեծ նախաձեռնություն, համալսարանում՝ հաջողությամբ ավարտելու համար այս վերակազմությունը: Բացի մեր Պետհամալսարանից, ղեկավար կադրեր ենք պատրաստում նաև համամիութենական այլ համալսարաններում: Դժբախտաբար, մինչև վերջերս ուսուցման ուղարկված ընկերների մեծ մասն ավարտելուց հետո չեն վերադառնում մեզ մոտ: Այս տարի մենք կոնտրակտացիա կնքեցինք հարյուրավոր ուսանողների հետ: Անհրաժեշտ է, վորպեսզի մեր որդանները սերտ կապ պահեն և լայն ոգնություն ցույց տան մեր ուսանողությանը՝ նրա ավարտելուց անմիջապես հետո նրանց ոգտագործելու համար:

Չեմ խոսելու մեր արվեստի, գրականության ներկա դրություն մասին: Այս բնագավառում նույնպես դրական բեկումն չկա: Կուլանայի միայն շեշտել, վոր մինչև այժմ շատ քիչ ուշադրություն ենք դարձնում, շատ քիչ միջոցներ ենք տրամադրում մասնաճյուղի սպասարկման և վերադաստիարակման այս

կարեւոր խնդրին: Այս բնագավառում ևս մեր Լուսժող-
կոմատը պետք է ավելի շատ մտահոգվի, քան մինչև
այժմ: Յեւ վերջապես, կինոյի, ռադիոյի, խրճիթ-ըն-
թերցարանների աշխատանքների դրուժյունը ֆնում է
խիստ անբավարար, այսինքն գրեթե նույնը, ինչ վոր
նախկին համագումարի նախորդակին: Չնչին է և ան-
կանոն գյուղական ռադիոցանցը. շրջանային կենտ-
րոնների մեծագույն մասը նույնիսկ բավարարվում է
վոչ ստացիոնար, այլ շրջիկ կինոյով, ամիսը 1—2 ան-
գամ: Մեր Լուսժողկոմատից և կապի վարչություն-
ներից պիտի պահանջել աշխատանքի այս ասպարի-
զում նույնպես ձեռք բերել դրական այն բեկումը,
վոր հնարավոր չեղավ հաշվետու շրջանում առաջացնել
կուլտուրական շինարարության այլ ասպարեզներում:

12. ՄԱՄՈՒԼԵ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Իդեոլոգիական պայքարի և մասսաների կազմա-
կերպման ու դաստիարակման խոշորագույն զենքը՝
մամուլը հաշվետու շրջանում բոլոր դժբերով ավելի
լայն և անհամեմատ ինտենսիվ աշխատանք կատարեց:
Ուրթ գաղափարախոսությունները, ինչպես նաև կու-
սակցական գծից բոլոր թեքումները վճռականորեն
մերկացվել են և հարվածվել մեր պարբերական և վոչ
պարբերական մամուլի միջոցով: Առանձնապես պիտի
արձանագրել զաւեակիզմի, ցաղիոնակիզմի գեմ մեր
մամուլի գծով պայքարի ծավալումը, մի աւելաւաճ,
վոր ավելի սիւսեմաթիկ պիտի շարունակել յեւ խո-
րացնել առաջիկայում:

Վոչ պարբերական հրատարակությունների բնա-
գավառում ամենամեծ նվաճումներից մեկը պիտի հա-

մարել մասսայական գրականության նշանակալից ա-
ճումը թե քանակով և թե հարցերի ընդգրկումով:
6-րդ համագումարից մինչև մայիսի 2-ը Պետհրատը
հրատարակել է 403 անուն գիրք, 1680 մամուլով և
1,853,288 ընդհանուր տիրաժով: Սրանցից՝ մասսայա-
կան գրականությունը 147 անուն, 629,000 տիրաժով:
Վորպես խոշորագույն նվաճում, պիտի հիշել նաև Լե-
նինի և Ստալինի յերկերի լիակատար ժողովածուների
հայերեն լեզվով հրատարակության գործի ձեռնար-
կումը, վոր հնարավորություն կտա մեր աշխատավո-
րության լայն զանգվածներին անմիջականորեն հա-
ղորդակից լինել լենինիզմի բնադրյուններին: Անհրա-
ժեշտ է արագացնել այս աշխատանքները, ինչպես
նաև մարքսիզմի կլասսիկների հրատարակության
գործը:

Պարբերական հրատարակությունների քանակն
ու վորակը խիստ զգալի չափով բարձրացել է. մենք
հաշվետու շրջանում ունեցանք 2 նոր որակները—
«Բանվոր» և «Ավանգարդ», վորոնք առաջ հրատա-
րակվում էին շաբաթը 2 անգամ: Հիմնվել են մի
շաբթ նոր ամսագրեր: Ուրթ չափով բարձրացել են
պարբերական հրատարակությունների տիրաժները:
«Ուրհրդային Հայաստան»-ի միջին տիրաժը 1928 թ.
կազմում էր միայն 8000, այժմ հասնում է 15,000-ի:
Նույն ժամանակաշրջանում «Մաճկալ»-ի տիրաժը
9000-ից հասել է 15,000-ի, և այլն:

Այնուամենայնիվ, անհրաժեշտ է շեշտել, վոր մեր
պարբերական մամուլի, մանավանդ գլխավոր որակներ-
թի տիրաժը չի կարելի բավարար համարել: Թերթե-
րի տիրաժների բարձրացումը մեր հերթական կարեւոր
անելիքներից մեկը պիտի լինի:

Կուսակցութեան զլիսավոր դժի մասսայականացման և նրա ճիշտ կիրառման համար պաշարելով՝ մեր մամուլն ունի և վորակական նվաճումներ: Սակայն պիտի շեշտենք, վոր կոլեկտիվի մեջ գծով կատարված վերջին սխալներն ու աղավաղումները ժամանակին ազդեցական չեմք հարվածելու սեռական քաղաքական մամուլի չափազանց քերական, հաճախ նույնիսկ խախտելով Եկոլեկտիվացման խաղը: Մյուս կողմից պիտի շեշտենք, վոր մեր թերթերը դեռ շատ քիչ են զբաղվում բանգործի թերթակիցների շարժման զեկավարութեամբ:

Ժողովուրդներն ունեն մի շարք աչքի ընկնող թերթեր, հրատարակվում են չափազանց անկաշուն, բավարար չափով չեն լուսաբանում Խորհրդային Միության զարգացման առաջին աշխատանքների փորձը, ինչպես և իրենց իրական ճակատի մարտական խնդիրները Խորհրդային Միության մասշտաբով: Մյուս կողմից մեր աշխատանքների սեռական հաճախումները մեր ժողովուրդների կողմից: Այս խնդիրներով հետադարձ առնչություն և ազդեցություն չեն զբաղվում:

13. ԿՈՒՍՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԿՈՒՍՍԿՅՈՒԹՅԱՆ ԱՃՈՒՄԸ ՅԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ.— Կարեք չկա բացատրել կուսակցության աճման և նրա սոցիալական կազմի բարելավման աշխատանքների հսկայական նշանակությունը: Հաշվետու շրջանում կուսակցության թիվ հետադարձության և թիվ տեղական կոմիտեները հատուկ ուշադրություն դարձրին այս աշխատանքների վրա: Մենք կարող ենք

արձանագրել, վորպես մեր կուսակցության հիմնական նվաճումներից մեկը, բավարար աշխատանքը կուսակցության աշխատանքի մասին:

Հայաստանում ունեյինք 1929 թ. հունվարի մեկին ընդամենը 10.064 կոմունիստ, 30 թ. հունվ. մեկին ընդամենը՝ 12.279 կոմ., 30 թ. ապրիլի 1-ին՝ 13.407 կոմ.:

Այսպիսով, 15 ամսում, դուրս գալով կուսակցության ընթացքում հեռացվածներին, Հայաստանի կուսակցությունն աճել է 3.343 կոմունիստներով— աճում 33 տոկոս: Հետաքրքիր է մեր կուսակցության աճման զինամիկան. 26 թվին կուսակցությունն աճել է 20 տոկոսով, 27 թվին՝ 3,2 տոկոսով, 28 թվին, 158 տոկոսով, իսկ 29 թվին՝ 33,2 տոկոսով. սա լավագույն ապացույցն է մեր կուսակցության կապերի ամրացման բանվորների և աշխատավորների հետ:

Բացարձակ աճմանը զուգընթաց, զգալիորեն լավանում է մեր կուսակցության սոցիալական կազմը: Բանվորներն ըստ սոցիալական կազմում են մեր կուսակցության 42,3 տոկոսը 29 թվի հունվարին, 51,5 տոկոսը՝ 30 թվի հունվարին և 54,5 տոկոսը՝ ներկայումս. ըստ զբաղմունքի բանվորներն այժմ կազմում են կուսակցության 33,5 տոկոսը՝ նախորդ համադրման ժամանակվա 28,7 տոկոսի դիմաց: Բատրակների տոկոսը կուսակցության մեջ 2,8-ի փոխարեն այժմ հասնում է 5,7 տոկոսի:

Զգալի փոփոխություն է կրել կուսակազմակերպության կազմը գյուղում. առ 1-ն հունվարի 29 թվի մենք ունեյինք 3.201 գյուղացի կոմունիստ, ներկայումս նրանց թիվը հասնում է 4.640 հոգու. 3.201

Այս ասպարիզով ձեռք բերված նվաճումների վրա հանգստանալ չի կարելի: Աճեցող է շարունակել կուսակցության անումն անկուսակցական բանվորական ակաթի, գյուղական չեմպիոնության ու կոլեկտիվիստական ակաթի հաշիվ: Պետք է ավելի խորացնել աշխատանքը թեկնածուների մեջ և նրանց ժամանակին անդամ փոխադրել՝ վերջ տալով թեկնածուների 5-6 տարվա ստաժի անթույլատրելի դեպքերին:

այս ուղղութեամբ շատ քիչ բան ե արվում. յենթա-
դրվող կուսահամալսարանը Հնաճողվեց կազմակերպել
վոչ Յերևանում վոչ ել Լենինականում: Յետ ե մնում
մեր ակտիվի տեսական մտքի զարգացումը, իսկ այս
պակասութիւնը չի կարող բացասական կերպով չան-
գրադառնալ նրա աշխատանքների վրա: Ժամանակ ե
վերացնել այն հակասութիւնը, վոր կա խոսքի ե
գործի մեջ կուսկրթութեան ասպարիզում: Ս.Գ.Վ.Ե.Լ.
յե, վոր կուսակցութեան քերականութիւնը գոր-
ծամոլութեան ե տեսում, վորն աջ ոպպոհութիւններ
աղբյուրներից յեվ արտահայտութիւններից մեկն ե,
Սրանից չենելով ել պիտի ձեռնարկենք կուսկրթական
գործի ավելի լավ ու բարձրորակ կազմակերպման:

ԿՈՒՍԱԿԿՈՒՄՍՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՅՄԱԿԵՐՊՈՒ-

ՄԸ.— Այս գծով գրեթե վոչինչ չենք արել: Կուսակցական
ապագարատները թե տեղերում ե թե կենտրոնում դեռևս
ունեն աչքի ընկնող թերութիւններ: Այս համագումա-
րից անմիջապէս հետո գործի պիտի անցնել՝ վերա-
կառուցելու ե ուղղորդելու աշխատանքները, բարձրացնելու հա-
մար նրանց վորակը:

Արդեն շեշտվեց, Վոր կոլտնտշինարարության
ընթացքում գյուղում կատարվեցին բազմաթիվ կո-
պիտ և խայտառակ սխալներ: Վերջին շրջանի աշխա-
տանքի փորձը հայտարարեց աչքի ընկնող բացեր առ-
հասարակ գյուղական մեր աշխատանքներում, կատար-
ված սխալների լուրջ բնույթը, Վորոնց հիմքը կազ-
մում է միջակ գյուղացու վերաբերմամբ լենինյան

մոտեցման խախտումը, զգալի բացերը, վորոնք հայտարարվեցին գյուղում, պահանջում են մեր բոլոր կուսկազմակերպութուններից շատ ավելի մեծ ուշադրություն դարձնել գյուղին, քան մինչև այժմ: Գյուղական աշխատանքների գրությանը, յեղած սխալների վնասկան ուղղմամբ միայն կարելի չե՛յափել այսուրվորեվե կուսկազմակերպության աշխատանքները: Այս ուղղությամբ անհրաժեշտ է՝

1. Լայնացնել կուսկազմակերպութունները գյուղում: 29 թ. ապրիլին մենք ունեւինք ընդամենը 368 կոմբջիջ, այժմ ունենք 393 կոմբջիջ: Այդ նշանակում է, վոր միջին հաշվով 3—4 գյուղխորհուրդների ընկնում է մի բջիջ: Բջիջների ցանցը լայնացնելու հնարավորութուն մենք ունենք: Անհրաժեշտ է ուժեղացնել ակտիվ ու առաջավոր բաժնակների, չքավորների և լավագույն կոլտնտեսականների ընդունելութունը, մասնավոր վոր գյուղական մի շարք բջիջներ գրեթե ամբողջապես բաղկացած են յեկվոր տարրերից, ծառայողներից և այլն:

2. Բարձրացնել գյուղական կուսակցական յեվ խորհրդային աշխատողների վորակը: Կատարված սխալների մի մասը բացատրվում է գյուղական և շրջանային ղեկավար կադրերի վորակի անբավարարությամբ: Յեվ, իսկապես, խոստովանենք, վոր մինչև վերջերս շրջանային կուս. և խորհրդային ապարատը կազմելիս մեծ մասամբ ղեկավարվել են «ինքնահոսի» թեորիայով: Շատ անգամ իբր պատիժ են նայել շրջաններն աշխատանքի ուղարկելու վրա. մինչգեոցջանն այժմ կազմում է մեր աշխատանքների հիմնական ողակը: Մենք ձեռնարկել ենք արդեն մի

շարք միջոցների՝ ուժեղացնելու շրջանային աշխատողների կադրը. անհրաժեշտ է շարունակել այս կուրսը, և մյուս կողմից ել ավելի լուրջ միջոցների դիմել՝ վերապատրաստելու համար գյուղական աշխատողների ներկա կադրերը:

3. Ուժեղացնել աշխատանքը չքավորության մեջ: Գյուղական աշխատանքների ամենաթույլ ողակն է այս բնագավառը: Գյուղում ստեղծված բարդութունների զգալի մասն, անկասկած, պիտի բացատրել նրանով, վոր չնայած կուսակցության դիրեկտիվներին, մենք չկարողացանք գեթ վորոշ չափով բավարար հիմքերի վրա դնել աշխատանքը չքավորության մեջ: Ասում են, որինակ, վոր 18 շրջաններում մենք ունենք 286 չքավորական խմբակներ: Յես չեմ կասկածում, վոր սրանց մի մասը գոյութուն ունի միայն բյուրոկրատական թղթերում, վորովհետեւ, յեթե աշխուժացող գասակարգային բեւեմին փորձեք երանում գրավել միջակին իր կողմը, բազմաթիվ գյուղերում բաժնակներն ու չքավորները կազմակերպված չեյին ակտիվ պայքարելու կուլակի գեմ, միջակի համար: Մեր գյուղական կազմակերպութուններն անսիջապես պիտի անհրաժեշտ դասեր առնեն այս ուղղությամբ. անհնար է ամրացնել դաշինքը միջակի հետ առանց բաժնակների և չքավորների դասակարգանորեն ամուր կազմակերպման: Գյուղական կազմակերպութունները չպիտի մոռանան, վոր չքավորների ինքնուրույն կազմակերպման թերագնահատումը աջ ողպորտյունիզմի ամենացայտուն արտահայտութուններից մեկն է: Բաժնակ-չքավորական խմբակների ցանցն անհրաժեշտ է լայնացնել անսիջապես և ամուր ղեկա-

վարությամբ պայմաններ ստեղծել նրանց յեռանդուն գործունեությունից համար:

4. Մամրացնել գաւիթներ միջակ գյուղացու հետ: Յես շեշտեցի, վոր թույլ տրված սխալների և աղավաղումների հետևանքով տեղ-տեղ միջակ գյուղացու հետ մեր դաշինքի խախտման անմիջական սպառնալիքի առաջ կանգնեցինք: Շնորհիվ սխալների վրձնական ուղղման ձեռնարկելուն, այսօր այդ վտանգն, իհարկե, դպալի չափով թուլացել է: Այդ չի նշանակում, սակայն, վոր մենք պիտի դանդաղեցնենք աշխատանքները՝ վոչ միայն մինչև վերջն ուղղելու համար սխալները միջակ գյուղացու նկատմամբ, այլև կանխել հետագայում նման սխալների կրկնումը: Հակամիջակային տրամադրություններ և տենդենցներ այսօր ել, անկասկած, տեղ ունեն գյուղական կուսակցմակերպությունների վորոշ ողակներում: Այդ առհասարակում է, իմիջի այլոց, գյուղական աշխատողների կոպիտ վերաբերմունցի մեջ միջակ գյուղացու նկատմամբ, միջակի գեղացիներից անուշագործ վերաբերվելու մեջ, նրան կուսակի շարքը դասելու յեվ ձայնագուրկ անելու մեջ յեվ այլն: Այս խայսառակություններից պես է վնասակարացի վերջ դրվի: Կուսակցության նկատմամբ ֆրասարարություն և կատարում կուսակցական կամ խորհրդային աշխատողը, վոր մինչև այժմ դեռ չի արել ամեն ինչ՝ ապահովելու համար ճիշտ դիրքավորում միջակի նկատմամբ ու չի ամրացնում գործնականում դաշինքը միջակ գյուղացու հետ:

5. Լինել գյուղի սոցիալիստական վերակառուցման առաջամարտիկների դիրքերում: Միջակի նկատմամբ

մամբ յեղած սխալների ուղղումը չի նշանակում և վոչ մի բոլոր թուլացնել պայքարը կուսակցության դեմ: Կոլտնտշինարարության մեջ կամավոր սկզբունքի անպայման կիրառումը չի ժխտում կոլտնտեսության ամրացման համար ակտիվ պայքար մղելու անհրաժեշտությունը: Միջակների նկատմամբ ապակուլակացման ժամանակ յեղած սխալների ուղղումը կամ վոչ համատարած կոլլեկտիվացման շրջաններում վտարվածները վերադարձը կարող է հուսալքություն պատճառել միայն անկապուն կոմունիստների և մանր-բուրժուական անարխիստական տարրերին: Նրանք մոռանում են, վոր սխալների ուղղումով են պայմաններ սեղծվում լայնածավալ առհասարակ շարժումների համար: Նրանք ծալում են ձեռները, յերբ անհրաժեշտ է ակտիվ աշխատանք՝ ամրացնելու համար կոլտնտեսությունը: Նրանց անգործունեությունից ոգտվում է կուսակցը: Գյուղի կուսակցական կազմակերպությունները, վորպես սոցիալիստական շինարարության առաջամարտիկները գյուղում, պիտի ակտիվացնեն պայքարը կուսակի դեմ, կոլեկտիվության գաղափար յեվ միջակի հետ գաւիթի ամրացման համար: Ահարածեց է գրա համար լայն ծավալել ինքնաֆինանսավորվող գյուղում ընդհանրապես, յեվ գյուղի կուսակազմակերպություններում մասնավորապես, վերջ տալ շարունակ և չինդիվիդուալ վերաբերմունքին կուսակցական կազմակերպության մեջ, պայքարել վարչական մեթոդների կիրառման յուրաքանչյուր արտահայտության դեմ կուսակցական կազմակերպություններում:

6. Բարձրացնել խորհրդային ուղիների դերը

ՏԵՂԵՐՈՒՄ: Ժամանակն ե գործնական քաջերի ղեմել՝
բարձրացնելու համար տեղական խորհրդային որդան-
ների դերն ու նշանակութունը: Մանավանդ վերջին
ամիսներում այնպես ստացվեց, վոր կուսակցական
որդանները տեղերում, փոխանակ ապահովելու կուս-
ղեկավարութունը խորհրդային որդանների աշխա-
տանքների նկատմամբ, իրենց վրա վերցրին անմիջա-
կանորեն նրանց ֆունկցիաները, մյուս կողմից, տե-
ղերում աշխատող բրիգադները փոխանակ ոգնելու
տեղական որդաններին և դարձ տալու նրանց ինքնա-
գործունեությունը, շատ անգամ զրկում էին նրանց
իրենց իրավասութուններից, փաստորեն իրենք ըս-
տանձնելով նրանց դերն ու կոչումը: Այս անհորմալ
յերևույթները գրում են խորհրդային իշխանութան
տեղական որդանների հեղինակութունը գլուղացիու-
թյան աչքում: Անհրաժեշտ ե վերջ տալ այդպիսի
յերևույթներին, ճշտորոշել կուսակցական և խորհրդա-
յին որդանների ֆունկցիաները համաձայն կուսակցիկ-
տիվների, բարձրացնել պատասխանատվության զգա-
ցումը խորհրդային որդաններում: **Հեղափոխական
որինակացությունը,** վոր գլուղում խախտում ե
ԵՍՏ ԽՈՍԻՍ, պիտի վերականգնվի անմիջապես:
Անհանդուրժելի չե այն յերևույթը, յերբ շատ դեպքե-
րում խրճիթվարը կամ կոմսոմոլիտան իր վրա չե
վերցնում և՛ միլիցիայի, և՛ դատարանի ֆունկցիաները,
ամենակոպիտ կերպով խախտելով հեղափոխական
որինականության տարրական հիմքերը: **Հեղափոխա-
կան որինակացությունը** միջակի հեռ գաժեճի ամ-
բացման ամենակարեվոր միջոցներից մեկն ե: Պիտի
բարձրացնել մեր դատարանների ու դատախազության

դերն ու նշանակութունը, պիտի ամրացնել հեղա-
փոխական որինականութունը գլուղում:

15. ԱՆԴՐՅԵԴԵՐԱՑԻԱՅԻ ՆՈՐ ԵՏԱՊԸ ՅԵՎ ՄԵՐ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

Համամիութենական կոմկուսի նոյեմբերյան հայտ-
նի վորոշումներից հետո Անդրկովկասյան Ֆեդերա-
ցիան թեկուսեց իր զարգացման նոր շրջանը: Հայտ-
նի չե, վոր իր զարգացման առաջին շրջանում Անդր-
ֆեդերացիան կատարում եր գերադանցորեն քաղա-
քական դեր. նրա հիմնական խնդիրն եր՝ ապահովել
ազգային խաղաղութունը, անդրկովկասյան ժողո-
վուրդների աշխատավորության համագործակցությու-
նը, պրոլետարական դիկտատուրայի ամրացումն Անդր-
կովկասում: 7—8 տարվա իր գոյության ընթացքում **Ա. Գ.**
դրկովկասյան Ֆեդերացիան ամբողջապես արգարաց-
րեց իր կոչումը: Դժվար եր նրա անցած ճանապար-
հը. նա սկզբից ևեթ կատաղի հարձակումների առար-
կա դարձավ և՛ ներսից, և՛ դրսից: Թշնամու տրամա-
դրություններով վարակվեցին նույնիսկ մի շարք կոմ-
մունիստներ, վորոնք սկսեցին ուկրոնիզմից և վերջաց-
րին իրենց քաղաքական կյանքը տրոցկիզմի հակահե-
ղափոխական ճահիճում: Ուկրոնիստների պահանջը
վերջին հաշվով հանգում եր ազգային դեմոկրատական
հանրապետութունների կազմակերպման:

Անդրկովկասյան կոմմունիստական կազմակեր-
պությունները ջարդուփշուր արին ուկրոնիզմը. նրանք
առաջ դնացին պրոլետարական ինտերնացիոնալիզմի
ուկրիներով և այդ ուկրինների վրա ձեռք բերին հսկա-
յական նվաճումներ: Ներկա ետապի վրա արդեն Ան-

դըրկովկասի աշխատավորութեան փոխադարձ կապի և համագործակցութեան հետագա ամրացումը հնարավոր է միայն Սեդրկովկասյան Ֆեդերացիայի ճշմարտական հիմքերի լայնացումով յեզ ուժեղացումով: Այս հիմնական պահանջից ել յեղնում է Համկ(ը)կ կ-ի հայտնի վորոշումը: Անդրֆեդերացիայի այդ կերպ ամրացումը և ուժեղացումը, սակայն, չեքեք չի նշանակում հանրապետութիւնների գերի նսեմացումը կամ նշանակալից փոփոխութեան անհրաժեշտութեան: Առաջիկային քայլերն ենք արել կ-ի վորոշման կիրառման գծով, և արդեն աշխուժացել է աղբայնական ձոհիճը, արդեն սկսել են վորոշող դաշնակցական թերթիկներն արտասահմանում: Մեքեք արժանի հակահարձակ թալով քննարկ վորոշողութիւններից՝ կը-նարանակեք մեր պայքարը Սեդրկովկասյան Ֆեդերացիայի ամրացման համար: (Քուռն ծափահարութիւններ): Բացի տնտեսական քաղաքական աշխատանքներից, անհրաժեշտ է ուժեղացնել նաև կուլտուրական մերձեցումը անդրկովկասյան ժողովուրդների աշխատավորութեան միջև: Այս գծով մենք ղեկ գրեթե վորոշինչ չենք արել, մինչդեռ մեր կոմսոմոլը, գրական կազմակերպութիւնները, Պետհրատը շատ կարևոր աշխուժներ ունեն այս ասպարիղում: Ե՛լ ավելի ուժեղացնել Անդրկովկասյան Ֆեդերացիան, լայն ծավալով առաջ տանել մեր աշխատավոր մասսաների կուլտուրական մերձեցումը և ինտերնացիոնալիստական դաստիարակութիւնը, — ահա աշխուժացող նաշիոնալիզմի դեմ պայքարի փորձիւծ գեներերից մեկը:

16. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՐԲԵՔ ԶԻ ՆԱՀԱՆՁԻ ԻՐ ԼԵՆԻՆՅԱՆ ԴԻՐԲԵՐԻՑ

Դասակարգային պայքարի սրումը, և վորոշ չափով ել մեր կատարած սխալները չեն կարող չանդրադառնալ ներկուսակցական դրութեան վրա: Ինչպես ամենուրեք, նույնպես և մեզանում աշխուժացան դասական տիպի ոպպորտունիստական տրամադրութիւնները, դասակարգային թշնամու ճնշումն անհետանք չանցավ կուսակցութեան վորոշ անկայուն ողակների համար: Մեծ աշխուժացում նկատուծ է ամենից առաջ աջ թեքման գծով: Այլերը փորձ են անում ոգտագործել այսորվա վորոշ սխալները և հիմնականում դրանց շնորհիվ ծագած վորոշ ղեկավարութիւնները՝ վարկարեկելու համար կուսակցութեան ղեկավոր գիծը, կուսակցութեան ղեկավարութիւնը: Նրանք փորձում են կոտորաբանղով փոխել կուսակցութեան լեւինյան գիծը: Նրանք հրապարակ են հանում գյուղատնտեսութեան ղարգացման «ինքնահոսի» թերթիւն, վոր վոչ մի առնչութիւն չունի Լենինի կոոպերատիվ պլանի և նրանից բղխող աղտիվ պայքարի հետ գյուղի սոցիալիստական վերակառուցման համար:

«Զախ» թեքման կողմնակիցները, մոռանալով միջակի վերաբերմամբ Լենինի թողած հիմնական պատգամը, ըստ ելութեան, իրենց քալլաբղիղութիւններով ուժեղացնում են աջերի դիրքերը: Այլերի և «ձախերի» քննադատութիւնը կուսակցութեան գծի նկատմամբ միքանի հարցերում այնքան մոտենում են իրար, վոր ղեկավար է ջոկել իրարից: Մնկելով միեւնույն աղբիւրից, մանր-բուրժուական տարերքից, վոր քալքայում ու

կազմալուծում ե առանձին կոմմունիստներին, աշերն
ու «ձախերն» այսոր կատարում են միեմուլն հակա-
կուսակցական գործը: Մենք բայլչեիկներ չենք լինի,
յեթե չչարունակենք ծավալել անհաւատ յեվ անողոք
պալաւ բոլոր տեսակի յեվ գույնի հակալեներնյան
քեմումների յեվ նրանց նկատմամբ հաւատարմութեան
դեմ, օվալ քաջանի հիմնական վտանգի՝ աջ
քեմում, ինչպես նաեւ նրան. քեմավորող «ձախ»
խոսողութեան դեմ:

Մեր պայմաններում, ինչպես հայտնի չի, թեքում-
ները վորոշ յուրահատուկ գույն են ստանում: Այլ թե-
քումը, թեև վոչ միշտ, բայց հիմնականում արտա-
հայտվում ե վորպես աջ-ազգայնական թեքում: Այլ-
ազգայնական թեքման վորոշ ներկայացուցիչները,
ողտվելով ժամանակավոր դժվարութիւններէ, վոր ու-
նեցանք վերջերս, նույնպես աշխուժացան ե փորձ ա-
րին վարկաբեկել կուսակցութեան ղեկավարութիւնը,
սկսելով այդ մեր ղեկավար կազմերի կամ առանձին
ղեկավար ընկերների վարկաբեկումից: Մի՞թե քաղքե-
նիական, թշնամական, յեթե կուղեք՝ դաշնակցական
բամբասանքները, վոր այնքան յեռանդոտ տարածում
են մեր լավագույն կազմակերպութեան՝ լինինյան
կազմակերպութեան մասին, ուրիշ նպատակ ունեն,
քան յեթե վերջին հաշվով կասկածի տակ առնել այն
հակայական բայլչեիկյան աշխատանքը, վոր կատարել
ե ՀԿ(Բ) Կ Կենտրոնական Կոմիտեն 2 տարում: Մեր
կուսակցական մասսաներն այնքան են աճել, վոր հաս-
կանում են, թե ով ինչ ե ուզում: Վստիօքի չի հա-
ջողվի քաղուց քե հայտնի միջոցներով փոխել մեր
կուսակցութեան գիծը, հաճել Կենտկոմն այն լեներ-

նյան դիրքերից, վորոց վրա նա ամուր կանգնած ե յեվ
պիտի կանգնի: (Բուռն ծափահարութիւններ): Այլ ու-
պորտիստների, աջ-ազգայնական թեքման դիմա-
կավորված թե հայտնի կողմնակիցների, անսկզբունք
խառնակիչների դեմ Կենտկոմը կմնա անհաշտ ու անո-
ղոք պայքարի դիրքերում: Մենք թույլ չենք տա
ողտագործել սխալները՝ վարկաբեկելու համար բայլ-
չեիկյան այն անախընթաց աշխատանքը, վոր ծավա-
լեցին Հայաստանի կոմմունիստական կազմակերպու-
թիւնները՝ իրենց բայլչեիկյան Կենտկոմի ղեկավարու-
թեամբ:

Մենք պետք ե ծավալենք ինքնաքննադատու-
թեան նոր ե լայն ալիք մեր բոլոր կազմակերպութիւն-
ներում: Հաշվետու շրջանում մեզ մոտ ես հայտարե-
րվեցին միշտ բարախակալութիւններ, վորոնք վկայում
են այն մասին, վոր, չնայած ինքնաքննադատութեան
ապարիքում մեր ունեցած հաջողութիւններին, գեռ
վո՛չ ամենուրեք ինքնաքննադատութեանը զարնել ե
մեր աշխատանքի յեվ մասսաների գործոն ակափու-
րյան զարգացման հիմնական մեքողը: Այս մասին
պիտի մտածեն մեր բոլոր կազմակերպութիւններն
անխտիր: Յետ վանելով ուպորտիստների բամբա-
սանքը ինքնաքննադատութեան ճշման մասին՝ մենք
պիտի ավելի սրեմք մասսաների ինքնաքննադատու-
թեան բայլչեիկյան գեմը՝ ուպորտիստների յեվ քե-
մութեան դեմ, հաճուց մեր կուսակցութեան բայլչե-
իկյան ամրացման, հաճուց նա լեներնյան գծի Կե-
սագործման: (Յերկարատեւ ծափահարութիւններ):

ԱՄՓՈՓՈՒՄՆԵՐ

Ի՞նչ միջազգային պայմաններում ենք դիմավորում կուսակցութեան 16-րդ համագումարը: Միջազգային տնտեսական-քաղաքական կյանքի վերջին փաստերն ամբողջապես արդարացրին Կոմիտեերնի տեսակետը կապիտալիզմի անկախուն ստաբիլիզացիայի ավելի և ավելի խաթարման մասին: Կապիտալիզմի «ստաբիլիզացիան», վորի գովքը չերգում ելին նաև դաշնակներն իրենց վերջին համագումարում, արագ քայլերով դիմում ե իր վախճանին: Սրվում են կապիտալիստական աշխարհի թե՛ ներքին և թե՛ արտաքին հակասութունները: Չնայած իմպերիալիստների բոլոր ջանքերին, նրանց չհաջողվեց «խաղաղացնել» Չինաստանը: Գուժում են Զինասացի հեղափոխական շարժիչ ուժերը, ծավալվում ե կոմունիստական շարժումը Չինաստանում: Հնդկաստանը՝ անգլիական իմպերիալիզմի հզորութեան այս կարեորագույն պատվանդանը նույնպես շարժվեց վերջապես: Անգլիական իմպերիալիստների «բանվորական» կուսակցութունը, դաշնակցած հնդկական բուրժուազիայի ու ազգային-լիբերալ ելեմենտների հետ, գնդակների տարափով ե փորձում կասեցնել մասսաների շարժումն իմպերիալիզմի դեմ: Այս անցքերը ցույց են տալիս, վոր հոգն սկսել ե շարժվել անգլիական իմպերիալիզմի վոսֆերի թակ Հնդկաստանում, յեվ նրա ժամանակավոր հաղթանակն իսկ չի կարող կասեցնել հեղափոխական ալիքի հեռագա վերելքը նայեվ Հնդկաստանում:

«Ստաբիլիզացիայի» խախտման հիմնական մոմենտն, անկասկած, մնում ե այն ճեթսական սուր կրի-

զիսը, վոր սկսվեց և խորանում ե միջազգային կապիտալի «ավետաց չերկրում»՝ Միացյալ Նահանգներում: Կրիզիսը չի պարփակվում և չեր կարող պարփակվել Ամերիկայի շրջանակում, այլ նա ընդգրկել ե նաև բազմաթիվ կապիտալիստական յերկրներ նաև Յեվրոպայում, ամենուրեք կատարելով կապիտալիզմի համար ավերիչ իր դերը: Այդ տնտեսական ճգնաժամի պայմաններում ել ավելի հեղափոխական ե դառնում բանվորական մասսաների տրամադրութունը: Կոմունիստական կուսակցութուններն արտասահմանում բայլը չհիկանում են, լաչնացնում են իրենց կազմակերպութեան և ազդեցութեան շրջանակը. նրանք արագ քայլերով ընթանում են դեպի բանվոր դասակարգի մեծամասնութեան գրավումը:

Սրվում են հակասութուններն իմպերիալիստական աշխարհի և Խորհրդային Միութեան միջև: Մեր նվաճումները, 5-ամյակի հաջող իրագործումը ջղայնացնում ե մեր թշնամիներին. միջազգային հեղափոխութեան առաջին միջնաբերդի ամրացումը նրանք իրավամբ ընդունում են վորպես սեփական անկման մոտալուտ վտանգ: Նրանք քանի գնում աչնքան ավելի լրջորեն մտածում են գինված ուժով խանգարել մեր հաղթական սոցիալիստական շինարարութունը: Ներանք արդեն արին առաջին քայլը՝ չինական սվիններով փորձել մեր զրահների ամրութունը և խայտառակ պարտութեան մանավեցին: (Մափահարութուններ): Բայց իմպերիալիստները դրանից հետո չհանդըստացան. նրանք շարունակում են նորանոր դավեր հյուսել մեր շուրջը. պաթեռազմի վթանգը յերբեք այնքան սպառնալի չի յեղել, վորքան ներկայումս: Ահա

Թե ինչու մենք, վորպես լենինյան ինտերնացիոնալիստներ, ամփոփելով մեր աշխատանքները, չենք կարող մեր մարտական վողջունները չուղղել մեր կարմիր բանակին ու հայտարարել, վոր Հայաստանի կոմմունիստական կուսակցությունը, վորպես համամիութենական լենինյան բանակի մի մասնիկը, և Հայաստանի բանվորա-գյուղացիական մասսաները պատրաստ են կատարել իրենց հեղափոխական պարտքը այն պայքարում, վորի նշանաբանն է մեր սոցիալիստական հայրենիքի դեմ ուղղված պատերազմի առաջին իսկ արարը կապիտալիստական աշխարհի գոյության վերջին արարը դարձնել: (Բուռն ծափահարություններ):

Հաշվետու շրջանում Հայաստանի կոմկուսակցությունը, ամրացած ու բալլչեկացած՝ հսկայական քայլերով առաջ մղեց մեր չերկիրը սոցիալիստական վերակառուցման ուղիներով: Կոլլեկտիվացման ընթացքում մենք կատարեցինք լուրջ և ծանր սխալներ. բալլչեվիկյան համադաշնությունը մեզնից շեղեց դեմում եմք այդ սխալների վրա, ինքնաբերական կրակի օակ մերկացնում եմք մեր սխալներն ու սայրափումները՝ վնասկանությամբ ուղղելու համար: Մեզ հետ են, բալլչեվիկյան կենտկոմի շուրջը միասնական շարքերով խմբված են մեր բոլոր կազմակերպությունները, մեր ակտիվը: Վոլյովի չի հաջողվի ճեղգված առաջ բերել մեր բալլչեվիկյան շարժումը: Մենք ել ավելի ամրակուռ կդարձնենք դաշինքը միջակ գյուղացու հետ: Մենք անհաշտ ու անողոր պայքար կշարունակենք հանուն Համ. Կ(բ)Կ կենտկոմի լենինյան գծի անաղարտ կիրառման. մենք ջախջախիչ հարվածներով

մինչև վերջը կհետապնդենք թեքումները, ավյալ շրջանի հիմնական վտանգը՝ աջ թեքումը, ինչպես և նրան թևավորող «ձախ» խոտորումներն ու մեր պայմաններում յուրահատուկ վտանգ հանդիսացող նացիոնալ-ոպպորտունիստական թեքումը: Վրաստանի ու Ադրբեջանի չեղբայրական կոմմունիստական կուսակցությունների շարքին՝ ամրացնելով Անդրկովկասյան ձեղերացիան՝ մենք կկարողանանք ջախջախել աշխատավորութան ամեն ձևի և յերանգի թշնամիների հույսերը, կկարողանանք ապահովել սոցիալիզմի լիակատար հաղթանակը: (Բուռն յեվ յերկարացեվ ծափահարություններ, ովացիա):



11

12

13

14

15

16

17

18

19

20

21

22

23

24

25

26

27

28

29

30

31

32

33

34

35

36

37

38

39

40

41

42

43

44

45

46

47

48

49

50

51

52

53

54

55

56

57

58

59

60

61

62

63

64

65

66

67

68

69

70

71

72

73

74

75

76

77

78

79

80

81

82

83

84

85

86

87

88

89

90

91

92

93

94

95

96

97

98

99

100



ՀՀ Ազգային գրադարան



NL0186606

ԳԻՆԸ 15 ԿՈՊԵԿ (2¹/₂ մամուլ)



Ա. ХАНДЖИАН

Период большого перелома и наши задачи
(Отчет ЦК КП(б)А 7-му съезду)

Госиздат ССР Армении
Эривань—1930

